ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

# Եղեգնիկ

7–8

(226-227) Հուլիս-օգոստոս, 2025

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԻԾԸ

Երբ հմուտ ոսկերիչը ավարտում է ստեղծագործ շղթան, փականը չի տեղադրում՝ հուսալով, որ համալրում է լինելու. ոսկե օղակները դեռ պիտի ամբողջացնեն, շարունակելի դարձնեն այն և ունենա կախազարդեր: Այս զգացողությունն ունեցա Նեկտար Սիմոնիի «Իմ ադեն» երկրորդ գրքի հայտնության համար, որ պիտի արձակագիրը հեռանա նախորդ ծանոթ ու հարազատ արահետներից և բռնի վերելքի իր նոր ճամփան, ստորոտից հասնի մինչև բուրգ:

Նյութաբանության հագեցվածությունը զարմանալի է ու վերձիգ:

«Իմ ադեն» ժամանակային էվոլյուցիա ունի. այստեղ հասուն կնոջ անդրադարձն է դեպի անցյալ, երբ ծաղկափեշ, գյուղական կոլորիտով պստիկ աղջիկը տարիներ անց դառնում է ազնվականության հովերով մի տիկին, ով այդ դիտակետից է խոսում իր ադեի մասին՝ նույնչափ անկեղծ ու խոսքաշատ, նվիրյալ ու արվեստով, ինչպես նախնականության մեջ էր: Գրքի շնչառությունը համաչափ է, անփոփոխ:

Ադեի իմաստնության, խոհականության, միամտության, հումորի ու ցավի հյուսվածքների շարահյուսական կապը մնում է առանցքային, գերագնահատելի՝ առաջին սանդղակից մինչև վերջինը:

Նեկտարի ադեն պատգամ ուներ:

«Սիմոնիս պզդի՛գ աղջիկ, դու հիշե, օր ադեի մնացած կյանքը կըշարունագվի քու մեճը, քու մտկերի, ուրդեղ օր ադեն գիշերները գույներ կըհնարեր ու փուչիգների պես կախ կուդար պլպլացող աստղերից»:

Այո՛, մտքային հոսքը չէր կարող կանգ առնել հուշերի վարարումների առաջ: Նյութերի անճիգ մատուցումները՝ առանց խաղ ու դիմակի, գտնում են հոգու ճամփան և ցուցանում գեղեցիկի կեռմանները:

Հեղինակի ներաշխարհի հնոցում չկան մտքային կիսահում հացեր: Նրանք վերարտադրվում են մենախոսության պես: «Բալա՛ ջան,- ասում էր ադեն,- վախտ կա, կըմդածեմ՝ ինչն օր սրդիս կամկով էրի, հարի հըմի ընձի տաքություն կուդա, ինչն օր խելքիս հաշվին էր, պաղությունից կըմրսիմ: Սաղ աբրածս կյանքը կռիվ տվի մդկիս ու սրդիս հետ, էղավ ըմբես, օր կայնա ու մնացի իրանց մեջտեղը»:

Արազգեղցի ադեն իր հիշողությունների սնդուկն էր որպես կտակ ու որդեգիր հանձնել թոռնուհուն, որտեղ ցավ կար, ճշտի ու սխալի վերարտադրում, հայրենակարոտ, որը ստիպում էր Եղսոյին միշտ ետ նայել: Այդ սնդուկի բանալին հանձնել էր Նեկտարին, ով հաճախ պիտի արևերես հաներ ադեի հիշողությունների թանկությունները՝ որպես մասունքներ: Ամեն բարդ երևույթից մինչև հոգեհմա պարզություն, հեղինակը մատուցում է բարձրագույն արվեստով:

Արազգեղը ստեղծագործական առանցք է, որի շուրջը պտտվում են վերհուշի ապրումները և բառերն ունենում են գունային թռիչքներ:

«Օր ըմբես էղնի՝ եդ էրտանք, հեչ մէ սելըմ չեմ նստի, ոդներս թող քելան ջայելավարի, հողը պաչելով ճամպեքի ծաղգունքը կըհավաքեմ, փունջ կենեմ ծոցիս վրա ու կըերգեմ աղջիգ վախտվա պես: «Ջան Գյուլումի» տոն կըսարքեմ, ու իմ գեղի սարերը կըհասկնան, օր ըդիգ Եղսոյի ձենն է...

Արխըլուղս կարել եմ

Օսկե կոջակ շարել եմ»:

Նեկտար Սիմոնիի պատմվածաշարն ունի ճիշտ ապրելու բանաձև, յուրատիպ քարտեզագրություն, և այդ կենսագրությունների խորքում արդար ապրելու կանոնագրքեր կան: Ադեն ասում էր. «Ընձի կըթվա, թե ջանիս մեճը մէ հին ղուտիգըմ կաբրի, օր վախտ-վախտ կըբացվի, օր չխեղդիմ, հեդո նորից կըփագվի: Իսկական Եղսոն ըդիկ է, էդ դառդագ ու լիքը ղուտիգն է. էդի է իմ ճշտի աչքերը»:

Ներքին էներգիայով լի, իր ապրածի եղելությամբ ադեն սովորական երևույթներին տալիս էր գեղարվեստի ինքնատիպ բացառիկություն:

«Էս անաստված դառդը ընձի սորվըցրավ քեփլդալով յոլա էրտալ: Տարին տարուն ըմբես էղավ, օր իրա հեդ սեղան նստա, իրան գիրգս առած՝ բիլամ ծիծղացի: Կսեն՝ դառդը մարդուն կըվենձցն»: Հըմի գուլզեմ հարցնեմ իմ բախտին՝ քանի՞ անհաշիվ տարիք ունիմ: Վայտե կերտա իմ անցավորներիցս էլ կանցնի»:

Երբեմն թվում է՝ գրքի հեղինակը նկարիչ է, և կտավում է անաղարտ բնությունը հենց ադեյական աչքերով: Գյուղաշխարհի պատկերումը ստեղծագործողի անսխալ ձեռագիրն է, արժանիքը, որտեղ շարժում կա, փիլիսոփայություն, սեր ու կարոտ:

Ծառի, թփի, քարի, փշի հետ խոսող ադեն, մայրության խորհրդանիշ ադեն, մինչև իր կյանքի վերջին օրը մնաց Արազգեղի բնակիչ, թեպետ վտարանդի հայի ճակատագիրը նրան ուրիշ ափ տարավ:

«Բալա՛ ջան, իմ Արազգեղի վարդերի փնջենու փուշն ուրիշ էր, օր կըծագեր, համայրա թե չէր մրմռա, մինագ կըտաքնար էդ խաճաճ տեղը, քիչըմ պաղ ջուր կըքսեյ՝ կանցներ: Ա՛խ, էդ կարմիր գոնձոձ գլխով գոռոզ փշերը:

Փշերն էլ մարդկանց պես ունին իրանց տարբեր ճակատագրերը, իրանք էն հողին կընմանվին, որի վրա օր կըբուսնին»:

Ամեն մի ժամանակ իր թելադրանքն ունի, բայց քայլող հուշարձան կմնա Արազգեղցի Եղսոն բոլոր տարիների համար՝ իր ճշտով ու իմաստնությամբ, կոլորիտով ու կերպարային յուրատիպությամբ:

Նեկտարը հրաշալիորեն է կերտել նրա բացառիկ կերպարը, որը խտացումն է նույն ժամանակի բոլոր ադեների: Այնտեղ է ապրում աշխարհի միամիտ ու անզարդ ճշմարտությունը:

Գիրքն իր որակական արժեքներով ունի դասականության կնիք և հայ գրականության լավագույն էջերից է: «Իմ ադեն» զգայական պատկերացումների ֆոնին կունենա հիշողությունների անջնջելի ու մնայուն դաջվածքներ, որոնք ի պահ կտրվեն գալիք սերունդներին: Բարի ընթերցում:

ՀՈՒՓՍԻՄԷ

## ՎԵՐՀՈՒՇ

Այո՛, հիշողությունները հաճախ հրեշտակաթև թռչունների պես սահում են հայացքիդ առջևով և դու գնում ես նրանց ետևից, երբեմն էլ կանգնում ես հուշի փակ դռան առաջ, նայում կողպեքին, պտտեցնում ես բանալին ու ներս մտնում՝ մուտքի առաջ թողնելով կոշիկներդ, որ ճանապարհի փոշին մնա դրսում: Ժամանակի չխունացած իրողությունները սկսում են շնչավորվել:

Երբեք չեմ մոռանա այն օրը, երբ Ադեիս հետ ոտքով գնում էինք Անի կայարան: Մեր գյուղից մեկ ժամվա ճանապարհ էր:

Ինչպես միշտ, իմ ադեն կանգ առավ և իր տանջված, ծերունական հայացքով սկսեց նայել

երկաթգծի երկարությամբ ձգվող բարձր ժայռերին: Ինձ միշտ թվում էր, որ նրանք սարերի թիկունքն են, որ առանց այդ քարեղեն հսկաների փուլ կգան:

- Ադե՛ ջան,- հարցրի,- ամեն անգամ կայարան գնալիս ինչո՞ւ ես հենց այստեղ կանգնում:

- Բալա՛ ջան, ինչըխ չըկայնիմ, դու հըլը էս ժեռերին աշե, իրանց երեսի ամեն մէ սանտիմետրիմ վրա հազար ու մէ փոթ կա. էդ ամենքը իրանց կնճիռներն են, ըդիգ իրանց նեսի տարիների դարդն ու ցավն են: Ո՞վ գիդե՝ քանի անհաշվելի տարվա կյանք է ամեն մէ փոթիմ մեճը: Հըլը էն ցածի ժեռին աշե, գույնը սևին կուդա, կըտեսնի՞ս, արցունքի կաթիլները սրդից կըթափին, ճաքերի մեճը լող կուդան: էն մեճտեղի ժեռին աշե, երեսը դեղնին կըզարգե, կերևա, օր արևը իրա դոշերը կըվառե:

Սիմոնիս պզդի՛գ աղջիկ, հըլը էն ամենավիրի ժեռին աշե, սարը թիգունքով կըպահե, գիդես թե ձեռներն եդևանց կըսխմե սարի դոշին: Ժեռերն ըդման կըսիրեն...

Իմ Արազգեղի գլխին օր թուրքի սուրը կըճոջվեր, ամեն օր գիշերները ձորերից խուլ դղրդոցի ձեն գուկար: Գեղացիք կսեյին, օր էդ խորունգ ժեռերից կըսկըձու իրանց կդորդանքը կըպոգվին ու կընգնին ձորը:

Բիլամ պոյեզն օր կանցնի էս ժեռերի արանքով, իրա ձենը կըփոխվի, կըծանդռնա ու ինչըխ օր շվիգը հավար կանչե: Օղորմածիգ Գիրքորն ընձի կսեր, օր ըմբես երգրներ կա՝ ժեռ չունին, դարուփոս էլ չունին:

Կզարմանամ՝ մարդն ինչը՞խ կրնա աբրի առանց իրա ժեռերի պադմության, հըբը ո՞ւմ հեդ բդի խորատա էնե ճամպա էրտլուց:

## ՆՈՐԱԾՈՂ

Ինչ հոգի բըդի էղնի էն մարդու մեճը, օր մինագ տապագ ճամպեքով կըքելե ու չիդե թե ինչ է քեփլդալը, չիդե թե ինչըխ սգու կուդա ջանիդ մեճը, եփ օր քիթ ու բերնովդ կըտապկըվիս չոր քարերին, հեդո ուժ ու կուլ կենես, ձեռներով կըսխմես չոքերդ, օր ոդի կայնիս:

Էդ անհավադ մարդիկ կսեն, թե ժեռերը խոսալ չիդեն: Հըլը դու գիշերն արի ու կայնի ըդեղ, կըզարհուրիս իրանց աղիողորմ ձենից: Մեգ գուլան, մեգ կըխընդան, քամու հեդ կռիվ կենեն, երեսների փոթերը վախտ կա կըպլբլա, վախտ էլ կա՝ խավարի մեճը գիդես թե կըդողա:

Բալա՛ ջան, դու ընձի ըսա տեսնիմ, գարնան գլխին օր գելնիս սարը, մանուշագներն ուրդի՞ց կըքաղես:

-Ադե՛ ջան, հենց էս ժայռերի ծերպերի մեջ են նրանք աճում ու կարծես թե թաքնված լինեն: Մանուշակի փնջերը այստեղ ենք կապում:

- Սիմոնիս պզդիգ աղջիկ, կըտեսնի՞ս, օր սարի բաց դոշերին մանուշագ չկա, իրանց տեղը ժեռերի գլխին է, ըդուր հըմար էլ իրանք պահապան կեղնին սարերին: էս հավիդենից կայնած ժեռերը իրանց սերը մանուշագի աչքերով մեզի կըղրգեն: Ես միշտ կըմդածեմ, թե էդ բարագ ցողունը ինչըխ կըճըղե էդ ծանդռ հողը ու ինչըխ էդ ժեռ քարերի տագը պդըդելով կըգդնի իրա ճիշտ ճամպեն, աբրելու ճամպեն:

Էդ մանուշագն իրա ճակատագիրն ունի: Մենք էլ ծաղգի պես, բալա՛ ջան, կերտանք ու կերտանք, ծանդռ բեռը մեջքներիս ու չենք մոլըրի ու էլի կըշողանք: Ամեն տարի նորից կըծաղգինք, նորից բուն կըդնենք, ցողունի պես կըծգվինք, մեր բալեքին մանուշագի թերթիգների պես անուշ կըգրգեենք ու էս ժեռերի պես կայնած կըմնանք: Բայց մէ օրըմ, եփ օր էլ սերմ չենք տա, եփ օր էլ չենք զարդարե մեր շուրջ-բոլորը՝ կիեռենանք, օր հողը շադրնա մեզնով:

Դե քելե, բալա՛ ջան, օրը կիսվավ: Էրտանք, տեղ հասնինք:

Ադես պինդ բռնեց ձեռքս և անխոս շարունակեցինք մեր դարուփոս ճամփան՝ դեպի Անի կայարան:

Ինձ թվաց՝ սարերը ճանապարհում էին մեզ նահապետների նման և սպասում, որ մի օր ադեիս հետ նորից պիտի գանք իրենց այցելության:

# ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է Արցախի Մարտակերտի շրջան, Մարալյան-Սարով գյուղում: 1992 թ. ադրբեջանցիների կողմից գյուղը գրավվելուց հետո տեղափոխվել են ազատագրված Շուշի ու մինչև 2020 թ.-ի 44-օրյան ապրել այնտեղ: 2014-2023 թթ. եղել է Շուշիի պետական թատրոնի տնօրենը, 2023 թ. հոկտեմբերից՝ Շուշիի շրջիկ թատրոնի ղեկավարը, 2024 թ. Թումոյի Ստեղծագրության դասընթացավար է: 2025 թ. տպագրվել է «Ինքնագիր 11»-ում:

## ՔԱՄՈՒ ՀԵՐԱԼԴԻԿԱՆ

Թե կոնկրետ ե՞րբ Հայաստանը հայտնվեց մեզ մոտ, չեմ հիշում: Մի բան հաստատ է, ինչքան հիշողությունս փորփրում եմ, ինչ դրվագ մտաբերում եմ, ամենուր Հայաստանը կա: Այնպիսի տպավորություն է, որ ծննդյանս օրվանից եմ նրան ճանաչում, ուղղակի 1992-ից ավելի մոտ դարձանք իրար: Բարձրահասակ, թիկնեղ, ամուր բազուկներով, արևից խանձված ու կոպտացած մաշկով, արծվաքիթ, հաստ ու տղամարդու կոպտություն ունեցող ձեռքերով, բամբ ձայնով, անբնական երկար մեջքով, հնամաշ շորերով, ոտքերին էլ՝ ամառ-ձմեռ ռեզինե կալոշներ: Ընտանիքով քաղաքի սեփական տներից մեկում էին տեղավորվել. տանը տղամարդ կար, ու ինչպիսին էլ որ լիներ, ոչ ոք չէր համարձակվի մոտենալ՝ ավելորդություններ թույլ տալ իրեն: Համարյա ոչինչ չունեին, ընդամենը մի վառարան, որ ամռանը որպես սուրճի սեղան էր ծառայում, ձմռանն էլ հազարից մեկ էր ծուխ արձակում՝ այն էլ կա՛մ ռեզինի, կա՛մ էլ վառվող հագուստի հոտով, սեղան, մի քանի ջարդուխուրդ եղած աթոռ ու երկաթե մահճակալներ: Երբևէ չեմ հաշվել մահճակալների քանակը, բայց հաստատ քիչ էին, ու երեխաները զույգերով էին քնում: Իր ու երեխաների հագուկապին առանձնակի ուշադրություն չէր դարձնում: Կողքից ով ինչ տար, դրանով էլ կբավարարվեր, կարևորը ոտքերը տաք լինեին, գլուխները չմրսեին ու կուշտ լինեին: Արդեն մոռացել եմ՝ կոնկրետ քանի երեխա ուներ, բոլոր երեխաներին միասին չեմ էլ տեսել: Մեծ տղան արտերկրում էր, աղջկան ստիպելով ամուսնացրել էին հարևանի տղայի հետ, մի քանիսը դպրոցական էին, երկուսը մանկապարտեզ էին հաճախում, փոքրն էլ մեծ ու սև աչուկներով, թուխ մաշկով մի տղուկ էր: Մի խոսքով երեխաները շատ էին ու միշտ սոված:

Ամուսինը բանի պետք չէր. մի շիշ օղու ու թթու դրած կաղամբի համար կնոջն էլ կվաճառեր, երեխաներին էլ: Խեղճ կինն էլ ոնց կարողանում՝ գլուխը պահում էր: Մեկ էլ տեսար առավոտյան 10-ին (իրականում օրվա որ ժամին ասես կգար ու միշտ անհարմար պահի) դուռը ծեծեցին: Փոքրին՝ Հովոյին, փեշերի տակն առած, ժպիտով ներս էր մտնում, տեղավորվում փայտե վառարանի մոտ, նախ տղայի ձեռքերը առաջ քաշում, հետո միայն իր ցրտից կոշտացած ու փայտացած մատները: Թե բախտը բերեց ու հաց թխելու ժամին եկավ, անպայման մեկը իրեն կտայինք: Արագ կտեղավորեր թևի տակ՝ տանը եղած երեխաներին հասցնելու համար, իսկ հետինը՝ Հովոն, այնպիսի հայացքով կնայեր, որ մի բոքոնիկ էլ հատուկ իր համար կթխեինք: Սև աչուկները միանգամից կպայծառանային ու հենց տեղում տաքտաք չպչպացնելով կուտեր:

Շուշիում Հայաստանին ճանաչում էին որպես գուշակ: 1992-ին մի մատ երեխա էի, մտածում էի՝ իրոք մարդկանց ճակատագրեր էր տեսնում, հիմա արդեն հասկանում եմ, որ խեղճ կնոջը տնից տուն մտնելու համար առիթ էր պետք: Շատ արագ կողմնորոշվել էր, որ դժվար ժամանակներում մարդկանց հույս է պետք, ինքն էլ բոլորին հուսադրում էր. «Սիրտդ մքնած ա, բայց մի քանի օրից լավ լուր ես ստանալու», «Մի՛ նեղվի, մի շաբաթից օգնություն ես ստանալու», «Թիկունքիդ կանգնած պաշտոնավոր կա», «Հըլը տե՛ս, տե՛ս ինչ մեծ ուրախություն ա մտնելու տունդ», «Սաղ, լավ ա լինելու, Հայաստանի ասածը գցած կորեկ ա»…

Էսպես, գուշակություններ անելով, մեկից կարտոֆիլ, մյուսից լոբի, մի ուրիշից հաց, թթու կամ մակարոն գոգնոցն առած երեկոյան տուն էր հասնում, որ գոնե օրվա մեջ մի անգամ երեխաներին կերակրեր, առավոտյան դպրոց ուղարկեր ու նորից տնից տուն մտներ:

Ապրելու իմաստը երեխաներն էին, սիրտը բոլորի համար ցավում էր: Մի օր Միհրանի ոտաբոբիկ լինելու համար էր լալիս, հաջորդ օրը Նելիի տաքությունը իջեցնելու համար դոշաբ էր փնտրում, ու ինչ գնով էլ լիներ, գտնում էր, մի ուրիշ օր Կարենի տետրերի հարցն էր խեղդում կոկորդը, բայց ամենաշատը փոքր տղայի վրա էր դողում: Ուր գնար, հետը տանում էր: Ասում էր. «Սրան որ ոտքի կանգնեցրի, մնացածին կհավաքի իրար գլուխ. սա է տանս կրակը վառ պահողը»:

Հայաստան մայրիկը հասկացել էր, որ շատ թե քիչ զոհված ազատամարտիկների ընտանիքներն են բարվոք վիճակում. ամսվա մեջ մի անգամ մեշոկով ալյուր էին ստանում, յուղ, մակարոն ու բրինձ, մեկ-մեկ էլ արտասահմանից հովանավորներ էին գտնվում ու ամիսը 50 դոլար ուղարկում: Անգիր գիտեր, թե քաղաքում քանի զոհվածի ընտանիք կա, ու երևի ինքն իր մեջ գրաֆիկ ուներ կազմած, թե շաբաթվա որ օրը ում տուն գնար: Մեր տուն շաբաթ կամ կիրակի էր գալիս, իսկ եթե այնպես պատահեր, որ աշխատանքային օրերին գար, հասկանում էինք՝ ծայրահեղ վատ վիճակում է, ու առանց ավելորդ պարզաբանումների, մեր չեղածով կիսվում էինք հետը, ճանապարհում տուն:

Տարիներն անցնում էին, մարդկանց հիմնական մասը, շատ թե քիչ, նյութական կայունություն էր ձեռք բերել, բայց Հայաստանը ու իր մեծ ընտանիքը նույն վիճակում էին (տան գլուխը թե բանի պետք չեղավ, ոտքի կանգնելը անհիրագործելի երազանք կդառնա):

Հովոն արդեն դպրոցական էր, երրորդ դասարանում էր սովորում: Նկատեցին, առաջարկեցին ֆիլմում նկարահանել, համաձայնվեց: Մի քանի ամիս հետո, Հովոն դառավ «Թևանիկ»: Ուր ասես հասավ, ինչ դահլիճներից ասես հնչեց նրա բամբ ձայնը: Մարդիկ սկսեցին ճանաչել ու ավելի շատ սիրել մեր Հովոյին: Ոնց էր ուրախանում Հայաստանը, ոնց էր հպարտանում փոքր որդու հաջողություններով: Թեեւ էլի նույն վիճակում էին, բայց արդեն բաժակ չէր նայում, մեջքը շտկվել էր, հայացքը պայծառացել՝ մի տեսակ ջահելացել էր: Հիմա արդեն ծանոթ մարդկանց տուն ուղղակի հյուր էր գնում ու կարող էր իրեն թույլ տալ տնավարի ասել.

-Աղջի՛, մի բաժակ կոֆե դիր, մինչև Հովոյիս կինոն գտնեմ՝ ցույց տամ:

-Վա՜յ, Հայաստա՛ն, կտրվիս տու, հա: Էդ հինչքանը՞ս սիրում կուճիրիդ:

- Հովոս ուրիշ է: Տունս կանգուն պահողը ինքն է լինելու: Դեռ ինչքան հաջողությունների պիտի հասնի, ամբողջ աշխարհը պիտի ինչքան հաջողությունների պիտի հասնի, ամբողջ աշխարհը պիտի խոսի Թևանիկիս մասին:

Եվ իրոք ամբողջ աշխարհը մի օր սկսեց խոսել Հայաստանի փոքր որդու մասին, բայց…

2020-ին Թևանիկը զոհվեց:

Վերջին անգամ Հայաստանին տեսա Եռաբլուրում, սպիտակած մազերով, խզված ձայնով, փոքրացած՝ կես բուռ դարձած, որդու շիրմաքարի առաջ կուչ եկած, հայացքը… Մոտեցա, հազիվ լսելի ձայնով ասացի.

-Հունցը՞ս, Հայաստան:

Երևի չճանաչեց կամ գուցե չուզեց 6000-րդ անգամ ներսի ցավը փորփրել ու ի ցույց դնել: Հայաստանի փոխարեն մարտի դաշտում իրենց կիսատ թողած կռիվը Եռաբլուրում քամու դեմ շարունակող դրոշակների բանակը բարեւս առավ ու հայացքն ուղղեց դեպի Մասիսը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ, ԱՆԴԱՐԶ (2025 Թ.)

*...Որ մեկդ է արդյոք,*
*Ինձ հուշ է հղում*
*Տատրակի թևով*
*Պատուհանիս տակ:*

*Ա. Մխիթարյան*

Նրա պոեզիան նրա սարսուռներն են՝ հատիկ առ հատիկ, հետո՝ հոսքով միալար, որ, իր իսկ բառերով, «Լռություն է անշշուկ՝ // Բանդած ներսում ճիչը»: «Հորձանուտ է կյանք կոչվածը. քեզ քշում է առաջ», և այս հորձանուտում՝ երազի աշխարհի մասին է նրա խոսքը:

Գրքում զետեղված ստեղծագործությունները, անկախ ժանրային տարբերությունից, ունեն մեկ ընդհանուր գիծ՝ բոլորը ապրված են և կամ թե հույզերի, ապրումների, զգացողությունների ամբողջացումն են: Մի շարք տողերում գրողի հուզազգացական վիճակի արտահայտությանը միանում է նաև նրա՝ տարիների փորձով խմորված կենսափիլիսոփայությունը. խոհերի խտացումներն են՝ բանաձևումներով: Այսպես՝ «Կյանքն ինքը սպասում է, իսկ հույսի շողերով շաղախված սպասումը՝ կյանքի իմաստ»: «Կյանքն ինքը գրում է իր սցենարը՝ հաշվի չառնելով մեր ցանկությունները»: «Զարմանալի է մարդն իր ներսով ու դրսով: Դուրսը ժամանակի հպատակն է, իսկ ա՛յ ներսը՝ այն, ինչ ներաշխարհ անունն ունի, շատ ավելի բարդ է»: «Հոգիներս փնտրտուքի մեջ, աչքերս՝ ուրիշի ունեցածին: Ապրում ենք՝ ցանկալով այն, ինչ չունենք, ինչը ուրիշն ունի: Ինքներս մեզ մերժելով ենք ապրում՝ աններդաշնակ… Տեսնես որտե՞ղ է պահված: Գտնեի, բաժանեի մարդկանց: Կյանքը դառնար համատարած ներդաշնակ, միագույն… անհետաքրքիր»: Ուշադրություն դարձնել մտքի հատկապես վերջնամասին…

Մանկական՝ ամանորյա խեժաբույր հիշողություններից մինչև այսօր. կյանքի մի ճանապարհ՝ ապրումներով, սպասումներով, հուշերով, հաճախ նաև՝ լռությամբ. ահա ևս մեկ ընդհանրություն գրողի և՛ արձակի, և՛ չափածոյի համար: Հեղինակը պատմում է, և պատումի ձևը, շունչը բխում է նրա մտածողության, ինչպես ասում են, գրչի առանձնահատկություններից, ձեռագրի՝ շահեկան տարբերությունից, իսկ խորքում կրկին և կրկին կյանքն է՝ ուրախություններով ու դժվարություններով, հաղթանակներով ու խոչընդոտներով, լույս ու ստվերով, մեծ ու փոքր հաշվումներով՝ մարդուց կախված և ակամա:

Կյանքի և մահվան մասին՝ ամբողջ մարդկությանը ի սկզբանե՝ մարդկության արշալույսից մինչև օրս հավերժ հետաքրքրող թեման. «Այս իրականության մեջ ամեն ինչ հակոտնյա է, ամեն ինչ համեմատության մեջ՝ չար ու բարի, մութ ու լույս, կյանք ու մահ: Թե՛ կյանք է տրվել, էլ մահն ինչի՞ համար է: Ինչո՞ւ մարդուն չի ընծայվել հավերժության ազատությունը…», կամ կա՞ արդյոք կյանք մահից հետո. ծանրածանր այս թեման նույնպես շոշափվում է գրքում՝ ավելի իրականի ու երևակայականի, այսկողմյան և այնկողմյան սահմանների՝ մեկ հստակ, մեկ էլ՝ աղոտ ընդգծումով: «Փո՛ւչ կյանք, անշունչ իրերի հավերժ մնայուն հուշերով լեցուն փո՛ւչ կյանք»:

Մյուս կողմից՝ ընդհանրական թեմաներ են՝ հայրենիք, պատերազմներ, երկրաշարժ, դեռ չավարտվող կռիվ՝ ներսի ու դրսի, գուցե մեղավորների փնտրտուք, և խեղճություն՝ իրեն բնորոշ հատկանիշներով, ծորացող տխրություն, քարացած հոգի ու անշարժացած արցունքներ, ի վերջո՝ այս ամենի հետևանքով՝ ասես կանգ առած ժամանակ:

Կյանքի օրինաչափ ընթացքը, երբ, միևնույնն է, վստահաբար, չկան պատահականություններ, ինչպես գրողն է մեկնաբանում՝ ճակատագրի հեգնա՞նք, թե՞ զուգադիպություն ճարտասանական հարցով՝ որպես ապացույց ներկայացնելով զուգահեռ աշխարհներ. մի կողմից՝ զինվորները փառահեղ թաղում են կազմակերպում… ծխախոտի մնացուկների համար, մյուս կողմից՝ ճանաչված լեյտենանտի դին հողին հանձնող չի գտնվում:

«…Կարոտ կա, անդառնալիի, անհնարինի կարոտ: Բացեցի հի՜ն, հի՜ն, նավթալինի բույրով հագեցած ընտանեկան ալբոմը: Էջ առ էջ թերթեցի, ամեն մի գունատ, խաշամաթուղթ լուսանկարի հետ վերապրեցի կանաչ, վառվռուն մի հուշ… Ուժասպա՜ռ, խաղա՜ղ, հանդա՜րտ մայրամուտ է: Ոգնին փշերը հավաքել, փակվել, քնել է… էլ լուսնոտ չեմ…»: Հետահայաց՝ էջերն են անցյալի մասին՝ Ալեքպոլ, Լենինական, Գյումրի, գյումրեցիներ՝ իրենց տոներով, ծեսերով ու ավանդույթներով, տոհմեր, արհեստներ ու արվեստներ, հին քաղաքի թաղեր, և բնականաբար՝ քաղաքի ոգուն բնորոշ հումորը՝ տեղին, փոքր առ փոքր չափաբաժիններով:

Գրողը նաև սիրո մասին է խոսում, իսկ սիրո ամենատարբեր դրսևորումներ կան, և սերը սկսվում է դիմացինի նկատմամբ հարգանքից գուցե, այլապես ինչով բացատրել տաքարյուն տղամարդու պոռթկուն խոսքին կնոջ լուռ, հետո՝ շառագույնով, ապա նաև՝ ինքնագոհ ժպիտով արձագանքը, որ պատմվածքում ուղիղ գծով համեմատվում է սիրված լինելու հետ:

Գյումրեցու՝ մի քանի սերնդի՝ ավանդաբար, գեներով փոխանցվող արժեքների մասին է խոսում հեղինակը, արժեքներ, որոնք մշտապես արդիական են, իսկ այսօր՝ մեր օրերում՝ առավել ևս:

«Ժամանակն ինձ նվիրեց աշխարհի ամենահամեղ գաթայի բաղադրատոմսը, որի մանրամասները լսել էի հորից»,-իր պատումն է մեղմիկ հյուսում գրողը. «Անհրաժեշտ է տաք թոնիր, թոնրի շուրթին գլխաշորն ու գոգնոցը կապած գորովագութ մայրիկ, մի քիչ խմոր ու խորիզ, որ իրար գրկեն ու ընկնեն թոնրի բարկ գիրկը: Հետո կարմրաթուշ, կլոր-կլոր արևները հավաքվեն տաշտակի մեջ: Կարմիր մի արև հայտնվի մանուկ հորս թաթիկների մեջ, իսկ տաշտակը՝ խնամքով ծածկված՝ թախտի տակ: Արևների տաք համերի ու բույրերի հետևից մանուկ հայրս հայտնվի թախտի տակ, ու երբ լսվի համեղ խրթխրթոցը, տատս անուշ կարծագանքի. «Վա՞յ, մեր տանը մուկիկ է հայտնվել, սիրուն մուկիկ…»:

Եվ… «…Երբ ուզում էի տուն բերել խռովածներիս, փնտրեցի ու չգտա: Ձեռքիս ետուառաջ է անում տատիս գրտնակը միայն: Փորձում է հարթել պճպճացող խմորը հոգուս: Ամեն ինչ սկսվեց, երբ տատս հավաքեց խսիրներն ու… գնա՜ց»:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Ուիլյամ Սարոյան

# ՎԵՐՋԻՆ ԲԱՌԸ ՍԵՐ ԷՐ



Շատ ժամանակ առաջ, երբ ես տասնմեկ տարեկան էի, մայրս ու հայրս երկար ու ձիգ վեճ ունեցան:

Վեճը ծայր առավ այն պահին, երբ հայրս տուն դարձավ Գրեֆի խանութի իր աշխատանքից, ուր բոլորի համար նա քառասունյոթ տարեկան վաճառող էր ընդամենը: Գրեֆի մոտ ամեն ինչ էր վաճառվում՝ մթերքից մինչև պատրաստի հագուստ, կենդանիներ բռնելու թակարդներ ու գյուղատնտեսական գործիքներ: Հայրս այդ գործին էր անցել օրը երեք դոլար վճարով, որ ստանում էր մետաղադրամով՝ յուրաքանչյուր տասներկուժամյա օրվա ավարտին: Նա կարևորություն չէր տալիս աշխատանքի բնույթին, թեև իր մասնագիտությունն ուսուցանելն էր, և պետքն էլ չէր, որ աշխատանքը կարող է կորցնել ցանկացած պահի՝ աննկատ:

Արդեն վեց ամիս՝ ուշ աշնանից մինչև վաղ գարուն, նա այդ աշխատանքի մեջ էր, երբ մորս հետ վեճը սկսեց ազդել եղբորս նյարդերի վրա: Ես այդ վեճը նույնիսկ չէի նկատում, մինչև Ռալֆն ուշադրությունս չբևեռեց դրա վրա: Ես այնքան էի հիանում եղբորովս, որ մորիցս ու հորիցս գանգատվելու հարցում միացա նրան:

Սակայն ավելի լավ է՝ նախ նկարագրեմ վեճը, եթե դա հնարավոր է:

Ընտանիքում նախնառաջ մայրս կար, որ կառավարում էր տունը, և հայրս, որ Գրեֆի մոտ էր աշխատում: Հետո գալիս էր եղբայրս՝ Ռալֆը, որն ավագ դպրոցի վերջին դասարանում էր: Հետո ես կայի՝ տարրական դպրոցի գրեթե վերջին դասարանում: Եվ հետո մեր քույրը՝ ինը տարեկան Ռոուզը, որ վայելում էր կյանքը ուղղակի՝ առանց դույզն-ինչ հոգս ունենալու:

Ամենը, ինչ կարող եմ ասել մորս մասին, այն է, որ նա պարզապես կին էր, ինձ համար՝ շատ գեղեցիկ կին: Շատ արագ փոխվելու մի բնավորություն ուներ՝ երգելու-ծիծաղելու բերկրանքից մինչև լուռ ու մռայլ անբավականությունը, որ մտահոգում էր հորս: Հիշում եմ՝ լսում էի, թե ինչպես էր նա կրկին ու կրկին ասում մորս. «Էհ, ի՞նչ է եղել»:

Ավա՜ղ, հարցը միշտ անօգուտ էր լինում՝ մորս ստիպելով լաց լինել, իսկ հորս՝ հեռանալ տնից:

Երկար այդ վեճի ընթացքում հայրս անհույս շվարած ու խորամանկությամբ գերազանցված էր թվում ինչ-որ անսպասելի ու անախորժ բանից, որը, սակայն, նա ի զորու էր կարգավորել և իրենից հեռու վանել:

Իմ եղբայր Ռալֆը դպրոցն ավարտեց և այդ ամառ ժամանակավոր գործ գտավ խաղողի մի այգում: Ամեն առավոտ՝ լույսը բացվելուն պես, հեծանվով տասնմեկ մղոն ճամփա էր կտրում այդ այգին հասնելու համար և ետ դառնում երեկոյան մութն ընկնելուց առաջ: Գործավարձը ժամը քսանհինգ ցենտ էր, և եղբայրս այդ գործն անում էր օրվա ընթացքում առնվազն տասը ժամ: Սեպտեմբերի սկզբին արդեն հարյուր դոլարից ավելի ետ էր գցել:

Մի վաղ առավոտ նա ինձ արթնացրեց:

-Ուզում եմ մնաս բարով ասել,– ասաց նա:– Սան Ֆրանցիսկո եմ գնում:

-Ինչի՞:

-Էստեղ մնալ է՛լ չեմ կարող:

Թե աչքերում լճացած արցունքները չլինեին, կարծում եմ, կասեի. «Դե, քեզ հաջողություն, Ռա՛լֆ», սակայն արցունքներն անհնար դարձրին այդ: Եղբայրս խոշորակազմ էր, ինչպես հայրս: Հագի կոստյումը հայրիկինն էր, որ մայրս էր ձևափոխել-հարմարեցրել վրան: Բայց ինչի՞ համար էին արցունքները: Արդյո՞ք դրանք մեկ րոպե անց հայտնվելու էին նաև իմ աչքերում՝ բոլոր այդ տարիներին երբեք չարտասվելու հարցում եղբորս ընդօրինակելուց հետո, նաև ինձ մոտ նրա արտասվելուց հետո, եթե հաշվի չառնենք այն երկու-երեք անգամները, որ ազատություն էի տվել արցունքներիս, երբ մենակ եմ եղել, ու ոչ մեկն այդ մասին չի էլ իմացել: Ու եթե իմ աչքերում ևս արցունքներ հայտնվեին, հանուն ինչի՞ կլինեին դրանք:

Այն ամենը, ինչ գիտեի, եղբորիցս էի սովորել, ոչ թե դպրոցից, իսկ ինչ որ նա գիտեր՝ հորիցս էր սովորել:

Այսպես, ուրեմն, ի՞նչ գիտեինք մենք: Հայրս ի՞նչ գիտեր: Եղբայրս՝ ի՞նչ: Ե՞ս ինչ գիտեի:

Ես վեր կացա անկողնուցս, արագ վրաս քաշեցի շորերս ու դուրս ելա ետնաբակ: Ծեր չինարու տակ կանգնած էր գրեթե ավարտված լաստանավը, որ եղբայրս ու ես պատրաստում էինք ազատ ժամերին, որպեսզի օրերից մի օր Քինգզ Ռիվըրում գործի դնեինք: «Ես մենակ կվերջացնեմ,– մտածեցի ես,– հոսանքով մենակ կիջնեմ Քինգզ Ռիվըրով»:

Եղբայրս հանդարտ դուրս ելավ տնից՝ ձեռքին մի հին ծղոտե ճամպրուկ:

-Ես լաստանավը կվերջացնեմ,– ասացի ես:

Կարծում էի՝ եղբայրս ինչ-որ բան կասի՝ ձայնի նույն անհաստատ տոնով, հետո կշրջվի ու կհեռանա, ու հենց այդպես էլ կլինի:

Փոխարենը, սակայն, նա ցած դրեց ճամպրուկն ու մոտեցավ լաստանավին: Մտավ մեջը և նստեց, ասես հենց նոր էինք լաստանավը ջուրն իջեցրել ու նավում էինք Քինգզ Ռիվըրի վրա: Եղբայրս ձեռքը գցեց լաստակողին, ասես՝ Քինգզ Ռիվըրի պաղ ջրերի մեջ, և նայեց շուրջը՝ կարծես լաստանավն անցնելիս լիներ խաղողի այգիների ու մրգաստանների միջով: Քիչ անց նա ոտքի ելավ ու ճամպրուկը բարձրացրեց գետնից: Աչքերում այլևս արցունքներ չկային, բայց նա չէր կարող ուղղակի ասել՝ մնաս բարով: Մի պահ կարծեցի, թե մտադիր է հրաժարվել հեռանալու մտքից ու կրկին անկողին մտնել:

Փոխարենը նա ասաց.

-Երբեք էդ տունը չեմ դառնա:

-Դու ատու՞մ ես նրանց: Է՞դ է պատճառը:

-Չէ,– ասաց նա և սկսեց լաց լինել, ասես ինը-տասը տարեկան լիներ, ոչ թե գրեթե տասնյոթ:

Ես բարձրացրի լաստանավը, շուռ տվեցի այն և սկսեցի ցատկոտել մեջը, մինչև որ տախտակներից մի քանիսը, որ այնքան խնամքով իրար էինք գամել, կոտրվեցին: Այնուհետև սկսեցի վազել: Չշրջվեցի, որ կրկին եղբորս չնայեմ: Վազքով ու քայլքով անցա ողջ ճամփան՝ գրեթե վեց մղոն, մինչև այն տեղը, ուր ծրագրել էինք լաստանավը գործի դնել: Նստեցի գետի ափին ու փորձեցի մտքերս ի մի բերել:

Սակայն՝ ոչ մի օգուտ: Ես այդ ամենն ուղղակի չէի հասկանում, այդքան բան:

Երբ տուն հասա, առավոտյան տասնմեկն անց էր: Շատ էի քաղցած, ուզում էի մի բան ուտել: Հայրս Գրեֆի խանութում իր գործին էր: Քույրս տանը չէր, իսկ մայրս չէր թվում, թե ուզում է նայել վրաս: Նա ուտելիք դրեց սեղանին՝ սովորականից շատ, ուստի ես լրիվ համոզվեցի, որ ինչ-որ բան գիտի կամ թե, համենայն դեպս, կասկածում է:

Ի վերջո ասաց.

-Լաստանավը ո՞վ է կոտրել:

-Ե՛ս:

-Ինչի՞:

-Բարկացել էի եղբորս վրա:

-Ինչի՞:

-Ուղղակի բարկացել էի:

-Հացդ կե՛ր:

Նա հյուրասենյակ մտավ, իսկ ես սկսեցի ուտել:

Երբ հյուրասենյակ մտա, մայրս, նստած կարի մեքենայի առջև, փոքրացնում էր հորս կոստյումներից մեկը:

-Էս մեկը քեզ համար է,– ասաց նա:

-Ե՞րբ կարող եմ հագնել:

-Մյուս կիրակի: Սա հորդ հներից է, երբ որ ավելի նիհար էր: Լավ կնստի վրադ: Դուրըդ գալիս է՞:

-Հա:

Նա ձեռքի շորը մի կողմ դրեց, փորձեց ժպտալ, հետո ժպտաց մի թեթև:

«Չգիտի՝ ինչ է եղել»,– մտածեցի ես: Հետո մտածեցի, թե կարող է գիտի, ու հենց էդպիսին է ինքը:

-Եղբորդ հեծանիվը գարաժում է,– ասաց նա:– Նա որտե՞ղ է:

-Սան Ֆրանցիսկոյի ճամփին:

-Բա դու ո՞ւր էիր:

-Զբոսնելու էի գնացել:

-Զբոսանքդ երկա՞ր էր:

-Հա:

-Էդ ինչի՞:

-Ուզում էի մենակ մնալ:

Մայրս մի պահ հապաղեց, այնուհետև ասաց.

-Եղբայրդ ինչի՞ է Սան Ֆրանցիսկոյի ճամփին:

-Դե, որովհետև...:– Բայց ուղղակի դա նրան ասել չէի կարող:

-Հա, դե լավ,– ասաց նա:– Ասա՛:

-Որովհետև դու ու պապան էդքան շատ եք կռվում:

-Կռվո՞ւմ:

Հա՛:

-Իրո՞ք,– ասաց մայրս:

-Ես ի՞նչ գիտեմ: Նրան ստիպելու եք, որ տո՞ւն գա: Պապան գնալու է բերի՞:

-Չէ՛:

-Պապան գիտի՞:

-Հա՛, ինքն ինձ ասաց:

-Ե՞րբ:

-Հենց քո փախչելուց հետո, երբ եղբայրդ էլ գնաց կայարանի կողմը: Հայրդ տեսել է էդ բոլորը:

-Բա չի՞ ուզել նրան կանգնեցնել:

-Չէ՛: Դե, հիմի դուրս արի ու սարքիր լաստանավը:

Ես լաստանավի վրա չարչարվում էի ամեն օր և վերջացրի երկու շաբաթում: Մի երեկո հայրս օգնեց ինձ բարձրացնել այն իր վարձած բեռնասայլակի վրա: Մենք շարժվեցինք դեպի Քինգզ Ռիվըր, լաստանավը ջուրն իջեցրինք ու թիավարեցինք գետն ի վար՝ մոտ տասներկու մղոն: Հետո հայրս գրպանից հանեց մի նամակ ու բարձրաձայն կարդաց: Նամակը հասցեագրված էր Սիրելի Մայրիկին ու Հայրիկին: Նամակում Ռալֆը գրում էր, թե գործ է գտել, որն իրեն դուր է գալիս, պատրաստվում է քոլեջ մտնել, երբ աշնանը ուսումնական տարին սկսվի, և որ լավ է ու երջանիկ: Նամակի վերջին բառը «սեր» էր:

Հայրս նամակն ինձ տվեց, և ես այդ բառը կարդացի մտքիս մեջ:

Սուրբ Ծնունդին հայրս ինձ ուղարկեց Սան Ֆրանցիսկո՝ եղբորս հետ մի քանի օր անցկացնելու: Ինձ համար հոյակապ մի արկած էր դա, որովհետև եղբայրս այժմ արդեն այնքա՜ն ուրիշ էր՝ գրեթե հորս նման, բացառությամբ այն բանի, որ ապրում էր կահավորված վարձու մի սենյակում, ոչ թե մարդկանցով լեցուն մի տան մեջ: Նա ցանկացավ իմանալ լաստանավի մասին, և ես ասացի, թե նավարկել եմ դրանով ու մի կողմ դրել՝ ձմռան պատճառով:

-Եկող ամառ արի, ու իրար հետ կնավարկենք՝ ոնց պայմանավորվել էինք,– ասացի ես:

-Չէ,– ասաց նա:– Մենք իրար հետ արդեն նավարկել ենք: Էդ լրիվ քո՛նն է հիմի:

Իմ որդին հիմա տասնվեց տարեկան է և վերջերս հասկացրեց, թե մայրն ու ես ժամանակ առ ժամանակ վիճում ենք: Ո՛չ մի նոր բան, անշուշտ. նույն՝ ընդհանուր վեճը, սակայն ո՛չ նրա մայրը, ո՛չ ես առաջներում երբևէ չէինք նկատել, որ դա նրան բարկացնում է: Բայց գիտեմ՝ ավելի ուշ – այս կամ թերևս հաջորդ տարի – նա մտադիր է խոսել կրտսեր եղբոր հետ, այնուհետ տնից հեռանալ: Երբ դա պատահի, ուզում եմ պատրաստ լինել՝ այնպես որ կարողանամ զսպել մորը տղային ետ պահելու փորձից: Նա լավ տղա է, ու ես չեմ մեղադրում, որ կարծում է, թե կյանքս շփոթ եմ դարձրել՝ մի բան, որ ինքը չի՛ պատրաստվում անել:

Անշուշտ, չի՛ պատրաստվում:

Բնագրից թարգմանեց
ՆԻՆԱ Ա. ՁԱՂԻՆՅԱՆԸ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

# ...ՈՐՈՎՀԵՏԵՎ ԿԻՆ ԵՄ

ժողովածուից

«Ամեն ինչ կատարյալ էր, // Մինչև մարդու հայտնվելը Երկիր մոլորակի վրա, // իսկ բացարձակ կատարելության համար // Աստված ստեղծեց կնոջը, // որ շարունակի սուրբ գործը երկրի վրա // ու մարդ ստեղծի…»:

/Նարինե Ապոյան, «…որովհետև կին եմ», Եր., 2025 թ./

Կնոջական… ամեն ինչ անցնում է կանացի՝ Նե-ի սկզբի առանցքով՝ սերը, երջանկությունը, լռությունն ու տառապանքը, և, հիրավի, խորհրդանշական է խորագիրը ժողովածուի, խոսուն և համապարփակ:

Ասել, թե հեղինակի բոլոր տողերը շնչում են սիրով և երջանկությամբ, հարկավ սխալ կլինի. հապա ցա՞վը, երբ, իր իսկ խոսքով, «հոգիդ պոկում են մարմնից», հապա վերքե՞րը, որոնց վիրակապելու համար ոչ մի հիվանդանոց չկա. «…ի վերջո քեզ համար տե՛ղ թող, // որտեղ խնամքով կպահես երազներդ // ու տիեզերքդ»,-ասում է հեղինակը:

«…Ես՝ մեղավորս, // թեկուզ միայն նրա համար, // որ Եվան է կերել խնձորը»,-անգամ մեղսոտ կանացի սկիզբը գիտակցելով՝ գալիս է նա՝ սեփական ծնունդից, մանկության՝ իր իսկ բառերով, մահճի տակ, հետո իր ներսում հայտնված «դևերի ուղեկցությամբ»՝ երջանկության փնտրտուքով, անշուշտ, ինչպես ամեն մեկն այս աշխարհում: Եվ ինքն իր հետ երկխոսության համար որպես հենք մո՛ր հետ երկխոսությունն է ընտրել՝ բնականաբար՝ պորտալարի հիշողությամբ՝ կրկին սեփական սկզբի խորհրդանիշ որպես. «Սանրի՛ր վարսերս ու հյուսերիս մեջ երազներ դիր // ու ձի՛գ կապիր հավատով, // ինչպես դպրոցական տարիներին էիր անում»,-ասում է գրողը:

Բացվում են խոհերի շերտերը՝ անձնական հուզապրումներ՝ ճյուղերով. կոչականը մայրն է, նախ՝ ինքնաորոնման, ապա և՝ երջանկության փնտրտուքների խաչմերուկում, կոչականը սերն է՝ սպասված ու անսպասելի, կարոտի ու ցավի արանքում, հեռացումի ու բաժանման, ունայնի ու տառապանքի արանքում, և կոչականն Աստված է. չէ՞ որ ամեն սկզբի ՍԿԻԶԲՆ է ՆԱ:

Ապա հայրենիք՝ պատերազմի ժամանակ և ընդհանրապես: Ի դեպ, այս տողերը արժանի են հանգամանալից քննության: «Պատերազմ ապրած մարդու հետ զգո՛ւյշ վարվեք. // դուք չգիտեք՝ նրա ո՛ր բաց վերքին եք կպչում: // Ի՞նչ իմանաք՝ քանի՛ անհետ կորած կա նրա ներսում, // քանի՛ գերեզման կա, ու քանի՛սը գերեզման չունեն, // քանի՛սն են լքել նրան, երբ հայրենիք էր փրկում, // քանիսի՞ն է լքել…»: Պարզ է՝ նա մարդն է, ում ներսում դեռ չի էլ ավարտվել պատերազմը, և դեռ ինքն իրեն չի էլ դուրս բերել կրակներից: Կամ՝ «Ամեն պայթյունից իմ մեջ մեկը մեռնում էր. // Աստված առաջինն է»,-նկատի ունի հավատի՝ ակնթարթորեն թուլանալը, ինչը մարդկային է, հատկապես այդ պրկված նյարդերով հասուն օրերի համար:

«…Գիշերվա ու քնի մեջտեղում նրա մասին երազներն էին, // որ արթնանալուց հետո ջրին չէր պատմում»,-միտք, որ, անշուշտ ապրված է. չէ՞ որ որպես հետևանք «ներսում՝ մի տեղ, մի՛շտ ցավում էր»: Ապա զգայուն այս հույզին հետևում է, այսպես ասած, արդարացված միավորումը. տղամարդուց ապրել սովորելուց հետո նաև նրա մեջ ծաղկելու, նորոգվելու, հասունանալուպտղակալելու՝ տրամաբանորեն իրար հաջորդող ժամանակներն են գալիս: Եվ հավատը, իհարկե, որպես արձագանք կանչի, սիրո և սպասումի կանչի, թե. «Արի՛ ու ծնվի՛ր իմ մեջ… // Արի՛, ինչպես երբեք, // ինչպես որ չես գ/ն/ալու…»:

Փրկություն ինքն իրենից, իր ճակատագրից գուցե, բայց նախ՝ ինքնաճանաչման գտնված հնարքով. «…Օգնի՛ր հասկանալ, // որ ես արդեն չափազանց մեծ եմ՝ // հեքիաթներին ու մարդկանց հավատալու համար… // Որ ամեն ինչի սկիզբն է միայն տարբեր. // վերջն է նույնը, մա՛մ, վերջը… // ու վե՛րջ»:

Ժողովածուում բանաստեղծությունների հերթագայությունը՝ ամբողջության մեջ, պոեմի արժեք է ստանում:

Գրքում արձակ բանաստեղծություններ են նաև՝ ուրույն վերջաբաններով. «Քեզ հետ ես սովորեցի քո աչքերով նայել կյանքին ու սիրել ինձ…», կամ «Եթե վախենում ես, որ քեզ կմոռանան, սե՛ր եղիր, թող մոռանան քեզ» և այլն:

Ապա նաև նրբին հումորի շղարշով մտորումներ են՝ ծնված ապրված իրականությունից՝ բնորոշ ճշմարտությանը, կյանքի՛ ճշմարտությանը: Այդպես՝ լքումը, կնոջական՝ դանդաղ, տարիների ընթացքում, լուռ… ինքն իրեն լքելը, որովհետև «Այսքան հոգատար // և այսպես խնամքով ոչ ոքի չի լքում կինը, // բացի իրենից…»: Ահա տառապանքի տողը. «Դու կարող ես ամբողջ գիշեր կծկվել էմբրիոնի նման // ու լուսաբացին այդպես էլ չծնվել, // որովհետև գիշերը վիժել է քեզ, // դու՝ սպասելիքներդ…», և կարոտից ծնված տողը. «Ուզում եմ զանգել ու ասել՝ // դու հավաքել ես աշխարհի բոլոր կարոտներն // ու թաղել իմ մեջ… // Զգո՜ւյշ. // կարոտներս դեռ ողջ են…»:

Հեղինակի ձեռագրի ինքնատիպ դրսևորումներից մեկը կարելի է ներկայացնել ամբողջությամբ՝ տպավորությունը լիարժեք դարձնելու համար. «Իմ ներսի կանայք անհանգիստ են. // տեղդ չեն գտնում… // Երեկ աշտարակներ էին սարքում, // որ քեզ հասնեին: // Չգիտեմ՝ // ո՛վ խառնեց նրանց լեզուն // ու երբ. // այսօր իրար չեն հասկանում… // Ներսումս աղետ է. // իմ ներսի կանայք կորցրել են իրար… // Մեկը հիմա տապանաքար է սարքում…»:

Եվ անշուշտ մեծ, անպարագիծ սիրո խոստովանություն՝ առ այրը, թեկուզ անփոխադարձ, թեկուզ կորցրած կամ դրա ստույգ վտանգի առջև:

Այսպես, անձնական ու անանձնական, իր կյանքի և կյանքի մասին ընդհանրապես, իր՝ ապրված զգացմունքի մասին և սիրո մասին ընդհանրապես. տողեր են, որոնք հեղինակի երախայրիքը լինելով՝ համարձակ են, առանց փակագծերի և ծեքծեքումների, անգամ՝ մյուս եզրը՝ առանց դրանցում թաքնվելու միտումի:

…«Երեկ որոշել եմ, // որ վաղվանից հեքիաթ եմ պատմելու // երազանքներիս, որ քնեն. // ինձ ոչ ոք հեքիաթներ չի պատմել… // Ասում են՝ հրաշքներ պատահում են, // Սպասի՛ր…»:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

---

Քաղաքը,
ուր վաղուց ոչ ոք չի ապրում,
քո մասին հեքիաթ է պատմում
մայթերին,
որտեղ քեզնից հետո անձրևները
չեն դադարում,
իսկ խաղաղության մասին
մոռացած աղավնիներին
ագռավներն են բերում.

Այս քաղաքում ծիթենիներ չեն
աճում...
Ու ճանապարհները,
որոնք մոռացել են ոտնահետքերդ,
վաղուց չեն հատվում իրար ոչ մի
խաչմերուկում...

Այս համատարած դատարկության մեջ
միայն լռությունն է արձագանքում
ու դիպչում շենքերի բետոնե պատերին,
արտասուք դարձած՝ գլորվում է
աշխարհի աչքերից
ու հեղեղ դառնում դեպի քաղաքի
սիրտը,
ուր բոլորը լքել են իրար.
ուր բոլորը պարտաճանաչ լքում
են իրար այսօր.
վաղը ուշ կլինի...

Քաղաքը, որ էլ չկա,
սպասում է քեզ նույն համառությամբ,
ինչով որ պատերազմ սկսեց խաղաղության դեմ
ու տանուլ տվեց քեզ ժամանակին...
Այստեղ ամենուր սպանված
դիակներ են,
քայլող արկեր ու նորածիններ,
որ մեռած են ծնվել...

Այս քաղաքում
գիշերը ոռնում է լիալուսնին,
ու էլի մեկը,
ով միշտ սպասում է քեզ...

***

Մենք այդպես էլ մարդավարի
չխոսեցինք իրար հետ
ու ոչ էլ կարգին հրաժեշտ տվեցինք իրար:

Դու չմնացիր ինձ հետ վերջին
գիշերը
ու սովորաբար չգնացիր լուսաբացին,
երբ ես հազիվ քնել էի,
թեև ես այդպես էլ քնել չկարողացա...

Դու չգրկեցիր ինձ ու մի տաք
ծածկոց չգցեցիր վրաս,
ու ես այդպես էլ չփլվեցի քո ներսում,
բայց ներսումս ավերակ մնացի...

Դու չհամոզեցիր ինձ տաք թեյ
խմել,
ու սառած մատներս չտաքացան
բաժակից,
ու դու այդպես էլ չիմացար՝
թեյը երբեք այսքան աղի չէր
եղել...

Դու այդպես էլ չշոյեցիր գլուխս,
որը երբեք չհենեցի քո ուսին
ու չմխիթարվեցի
ո՛չ քեզնով,
ո՛չ Աստծով
ու քո ծնկներին մանկան նման
չխաղաղվեցի,
ու այդպես էլ մայր չմտա
քո հոգում...

Դու այդպես էլ չսովորեցիր ճիշտ
հեռանալ,
ես էլ չսովորեցի բաց թողնել...
Ու թողեցինք ամեն ինչ ճակատագրին,
որն այդպես էլ որոշված չէր
մեզ համար...

Մենք չկարողացանք ճիշտ խոսքեր գտնել,
ոչ էլ սխալ խոսեցինք,
չլռեցինք նույնիսկ իրար
գլուխ ափերի մեջ առած,
բայց լռեցինք կարևորի մասին...
Ո՛չ արտասվել կարողացանք,
ո՛չ էլ արցունքները խնամքով
թաքցնել,
բայց թաքցրինք մեզ ու խեղդվեցինք իրար մեջ,
օգնեցինք իրար օտարանալու,
բայց այդպես էլ օտար չդարձանք.
դու փակվեցիր իմ մեջ ինչպես
ամոթ,
ես մնացի քեզ հետ անամոթի
պես...

Մենք այդպես էլ իրար ճիշտ
չհասկացանք,
բայց հասկացանք՝
ամեն ինչ նման էր սիրո.
ամեն ինչ սխալ էր սկզբից:
Վերջում թողեցինք իրար ճի՛շտ
ժամանակին՝
անժամանակ ու առանց տեղ
որոշելու.
-Լա՛վ մնա:
-Դո՛ւ էլ...
...չմնացինք...

Ու այդպես էլ կարգին հրաժեշտ
չտվեցինք իրար,
ոչ էլ մեզ մարդավարի
պահեցինք...

***

Ի՞նչ կարևոր է՝
վաղն ո՛վ կփրկի աշխարհը
կործանումից,
որովհետև դու ինձ աշխարհներ
խոսք չես տվել:
Դու ինձ ոչինչ խոսք չես տվել,
բայց խոստացել ես լքել ու մոռանալ ինձ վաղը,
երբ ես կսիրեմ քեզ այնպես,
ինչպես դու՝ հայրենիքը,
ու կմնաս իմ մեջ անավարտ,
ինչպես բոլոր պատերազմները,
որ հաշտության պայմանագիր են
կնքում
ու թանկ են վճարում խաղաղության համար...

Ի՞նչ կարևոր է՝
վաղն ո՛վ կլինի աշխարհի տերը,
որովհետև դու տեր չես ինձ այնպես,
ինչպես ես հնազանդ չեմ
այս կյանքին,
ուր բոլորը նախընտրում են
անկեղծությունը,
դու շարունակի՛ր խաբել ինձ.
ես ուզում եմ երազել...

Ի՞նչ կարևոր է՝
վաղը ո՛վ կկործանի աշխարհը,
որովհետև դու չես փրկել
իմ աշխարհը կործանումից...

Եվ ի՞նչ կարևոր է՝
որ վաղը կկորցնեմ քեզ,
որովհետև քեզ երբեք էլ չեմ
գտել...

***

Նրանք,
ովքեր ուզում էին ինձ ողջ-ողջ
թաղել,
սովորեցրին ինձ լողալ հողի մեջ
ու ձուկ բռնել հողից...
Ովքեր փորձեցին խեղդել ինձ
ջրերում,
սովորեցրին ինձ լողալ դեպի բաց
ծով ու մարգարիտներ հավաքել
հատակից...
Իսկ ովքեր հրեցին ինձ թիկունքից,
սովորեցրին թռչել երկնքից
բարձր
ու դեմքով ճանաչել Աստծուն...

Սա էլ կանցնի,
որովհետև ամեն ինչ մի օր
անցնում է...
Ովքեր ինձ քաղում էին,
չգիտեին, որ կյանքը
ծաղկելու մասին է
հենց այնտեղ, որտեղ հույսը
վերջինն է մեռնում...

***

Իմ ու քո սիրո միջև չլվացված
ամաններ կան,
չարդուկված վերնաշապիկ
ու չփռած լվացք կա...

Իմ ու քո սիրո միջև չհավաքած
անկողին կա,
հատակին թողած հագուստի
կույտեր,
չհերիքող լվացքի փոշի կա...

Իմ ու քո սիրո միջև դեռ չմաքրած
լոգարան կա,
հատակին թափված ջուր,
սանրի վրա թողած մազափնջեր
կան...
Իմ ու քո սիրո միջև չլվացված
դռներ ու պատուհաններ կան,
ամառ-ձմեռ չարված դարակներ,
չսրբած փոշի կա...

Իմ ու քո սիրո միջև չհավաքված
կոշիկներ կան՝
չլվացված ու ցեխոտ,
չգտած հողաթափեր
ու զույգը կորած կամ ծակ
գուլպաներ կան:

Իմ ու քո սիրո միջև ծնողական
ժողովներ կան,
չվերջացող բողոքներ
ու չավարտված դասեր կան...

Իմ ու քո սիրո միջև չեփված
ճաշեր կան,
հատակին թափված հացի
փշուրներ,
դեռ սոված ներ
ու ամեն ինչից կշտացածներ
կան...

Իմ ու քո սիրո միջև անժամանակ
եկած գարուն կա,
չավլած տերևներ,
չէտած ծառեր կան...

Իմ ու քո սիրո միջև
խելառ սիրո պատրաստ դուստր
ու որդի կա, վեճեր,
կամակորություն
ու անիմաստ գոռոցներ կան...

Իմ ու քո սիրո միջև չհերիքող փող
կա,
չվճարված կոմունալներ,
վարձեր
ու չգնված ապրանքներ կան...

Իմ ու քո սիրո միջև մշտական
դադարներ կան,
չքնած գիշերներ,
չկիսած կենցաղ,
օտար քաղաքներ
ու ինքնաթիռներ կան...

Ամեն ինչ կա իմ ու քո սիրո միջև,
բացի իրարից...

# ԽՈՀԵՐ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆԻ

«10950 օր ժաժք»
գրքին շուրջ

Կնշանակէ երկրաշարժ, գրքին վերնագիրը արդէն իսկ առաջին հայեացքէն կը ստիպէ, որ պահ մը ոտքի ելլես ինքզինքդ առջև ու անվախ նայիս պատմութեան դէմքին: Նայիս ինքզինքդ հոն գտնելու, տեսնելու և զգալու հրամայականով, քանզի այս գրքով Լիլիթ Մկրտչեան կը ներկայացնէ ամբողջ ժամանակաշրջան մը, ուր մենք ապրեցանք մեր սեփական ցավը ծամելով, ապրեցանք անյաղթահարելի կորուստները յաղթահարելով, և մնացինք՝ ապրեցնող հայու տեսակ ու այսօր ալ կը շարունակենք պահել ինքնութեան հզօր այդ ջիղը, որու բաղադրութիւնը բարութիւնն է, հավատն ու սէրը, լավատեսութիւնն ու հայրենիքի ունեցած մեր դարաւոր հաւատարմութիւնը:

Առաջին իսկ տողերէն ընթերցողին առջև բացող նկարագրութիւնները, յուրատեսակ պատմութիւնները համեմած են Գիւմրուայ հումով-հոտով բարբառով, գիւմրեցիքին յատուկ հումոր կայ այստեղ, գիւմրեցիքին յատուկ լեզվամտածողութիւն, բացառիկ պատկերներ ու նաև սատիրայի՝ երգիծաբանութեան ժանրով համեմուած ճշմարտութիւններ, որով յեղինակը կը մատնանշէ աննկարագրելին, անպատմելին՝ դժողքի ճիրաններէն անցած մարդու ցաւերը:

Գրքի պատկերներն ու կերպարները ապրող էակներ են, որ յիշողութեան սեփական դարպասէն կը նային մեզի՝ հասկանալու համար՝ ո՛ւր հասած ենք մենք ժաժքէն 30 տարի ետք:

Պետք է նշել, որ գրքին մէջ կը գտնեք բացատրական բառարան մը, որ կը դիւրացնէ բարբառային շարադրանքը:

Եւ այսպես ուրեմն, կրցա՞ծ ենք արդեօք մենք վերակառուցել մեր օճախներն ու հոգիները, 30 երկա՜ր, իսկ պատմութեան համար ակնթարթ թվացող տարիները: Ամո՞ւր ենք արդեօք կառուցէր ժամանակակից, համաշխարհայնացման ախտերը դիմագրաւելու համար եւ ո՞վ է վերջապէս հայ մարդը այս ամէնքին մէջ ու այս բոլորէն դուրս, երբ իր սեփական պատմութեան էջերը թերթելով, շինարարի կամքով եւ մտաւորականի տեսլականով կը շարունակէ պահել ու պահպանել մարդկային ու ազգային ինքնութիւնն ու արժեքները:

«10950 օր ժաժք» գրքին մէջ տեղ գտած պատմուածքներուն վերնագրերը չափազանց խորհրդաւոր են, միմեանց հետ շարունակական, ըսելիքի ներքին ռիթմով բաբախող ու կարմիր թելի պէս իրարու հետ կապուած, մէկը միւսի մէջ շարունակուող, մէկը միւսով ամբողջացող:

Աչքիս առջեւ է 1988-ի դէմքը, յուշերուս մէջ կապրին ընկերներս, որոնք չկան, ափերուս մէջ է անբարբառ ու կիսատ մնացած մանկութիւնը իրենց...

Յուշերու ինքնատիպ խառնարան է այս գիրքը՝ ուրախութեան ու ցաւի համանուագ, կեանքի ու մահուան շեփորաերգ, իրական, տեսիլքային ու ինչպէս Լիլիթ կսէ՝ «էդ օրերն աշխարհքի կալենդարից (այսինքն՝ օրացույցէն) պոկուած թերթեր չէին, մեր ապրած տարիներն էին, օր իրանց մէջ մաշին մեզի ու ապրելու հըմար բան չմնաց տակը»:

Պատումները իւրաքանչիւրն առանձին եթե առնենք, ունին իւրօրինակ գոյն ու զգացողութիւն, Լիլիթ կը նկարագրէ դեռատի սերունդի **«Չեկով հաց»,** այսինքն կտրոնով հաց, կրամներով հաց բաժնուող, այդ չափաբաժնի հոգեվիճակն ու ապրումները ու մանկամարդ սերունդ մը ողջ, որ ստիպուած էր ապրիլ ու պայքարիլ կեանքը ունենալու համար, ստիպուած էր իր մանկութիւնը մոռանալ ու ժամանակի դառն շունչին տակ արագ մեծնալ ու հասուննալ, քանզի մէկ կողմէն կեանք չկար ապրելու համար, իսկ միւս կողմէն կեանքը չէր սպասեր, որ դուն անուշ մանկութիւնդ ապրէիր...

Սով էր, ու հացը կրամ-կրամ կը բաժնէին ու շատ հաճախ կը ստիպուէիր այդ սեւահաց, չորցած պատառին բույրը երկա՜ր պահել շուրթերուդ յիշողութեան մէջ...

Ցուրտ էր ու հագած հագուստներդ մէկ կողմէն կը պաշտպանէին երեւելի ցուրտէն սակայն միւս կողմէն իրենց անյաղորդ «տաքութեան» մէջ կեանքդ կը մաշէին, որովհետեւ ամէն օր աչքդ լոյսին բանալով փառք կուտայիր Աստծոյ, որ շունչ կայ բերանդ ու ընկերներուդ պէս՝ մահը քեզի ալ չէ կըլլած:

Շատերը հայր չունէին, եւ Լիլիթի այս նկարագրութիւնը ցնցող է, գեղարվեստականօրէն պատկերաւոր եւ յուզիչ:

«Պատի վրայ պապա ունենալը սովորական էր, որդեվ ես միակը չէի: Ընկերներիցս շատերը ունեին ըդպէս պապաներ, նոյն թրաշի չափով, զինվորի շորերով ու ավտոմատներով: Իրանք մեզի հըմար պատի վրի պապա էին, բայց էն հայացքով օր իրանց դաստիրակութեան բացակայութիւնը չէինք զգայ»:

Ահաւասիկ խորախորհուրդ նկարագրութիւն մը, որ կու գայ հաստատելու՝ թէ պիտի կարենալ մարդու կեանքին մէջ ըլլա՛լ, ըլլալ ո՛չ սովորական ու շատ յաճախ ալ ոչինչ ասող միայն ֆիզիկական ներկայութեամբ: Այսպէս, ամբողջ սերունդ մը դաստիարակեցաւ «Պատի պապա»-ներուն հայեացքին ներքոյ, մնալով հաւատարիմ հայրերու դաստիարակութեան, որովհետեւ՝ ամօթ էր սխալ բան ընելը՝ պապան ի՞նչ կսեր, կամ տուն վերադարձէդ ետք, ինչպէ՞ս պիտի համարձակէիր նայիլ պատէն կախուած պապայիդ լուսանկարի աչքերուն...

Գրքին մէջ տեղ գտած ամէն մի պատմուածք ընթերցողին առջեւ կը բանայ զարմանալի մտապատկերներ ու յոյզեր, որոնց ըսելիքը խորքային է, նաեւ ենթիմաստային, ու եթէ զանոնք առնենք գրաքննադատական հայեացքի տակ, կարելի պիտի ըլլայ իւրաքանչիւրը առանձին-առանձին վերլուծութեան ու գնահատանքի ենթարկել:

Օրինակ առաջին պատմուածքի՝ «Ժաժքի տակ մնացած լայքեր»-ի ենթիմաստը բնութագումը ընթերցողին մտածելու, խորհելու առիթ կուտայ:

Լիլիթ կը գրէ .«Քաղքիս երկընքէն օր թոզը (այսինքն փոշին) քաշվավ, սաղս ժեշտից (թիթեղիայ) տներ ունեցանք, դպրոցներն էլ էին ժեշտէ, մանկապարտեզներն էլ, հիվանդանոցներն էլ... Մենք էլ ժեշտէ մարդիկ դառանք՝ դիմացկուն ու ժանգոտ: Մենք մեզի համոզինք, օր ըսիկ լավ է. ինչքան էլ ուժեղ ժաժք էղնի, չի բլի, ու շարունակինք ապրել, խնդալով ապրել ու խնդացնել»:

Ահա եւ կեանքի այս անգոյն գոյներու նկարագրութիւնը, որ իր մէջ ամբարած է հոգեբանական ամենատարբեր զգացումներ, սակայն անոնք լաւատեսութեամբ յաղթանակած են, ու թեև պատմութիւնը ակամայօրէն կիսված է երկու մասի, «Ժաժք»-էն առաջ ու «Ժաժք»-էն ետք, սակայն յաղթանակած է կեանքը, ու բոլորս պատրաստ ենք շարունակել ապրիլ, պատուախնդրօրէն ապրիլ նաեւ բացականերուն համար ու անոնց տեղը:

Երկրորդ պատմվածքը՝
**«Տեղական թոզն ու իմպրտնի փոշին»**

Բոլորս վստահաբար կը յիշենք՝ այդ օրերուն աշխարհի տարբեր անկիւններէն Հայաստան հասնող օգնութիւնները: Լիլիթ կը գրէ՝

«Մերոնք կխնդրեին, աշխարքի վրից բարութիւնը չէր վերացել ու մեզի չորս թարֆից սկսին պասիլկեք ղրգել: Կերթայինք 3 ժամ օճերի մէջ կեանքի ու մահուան կռիվ կուդայինք, թոզի մեջ կորած, շնչակտուր տուն գուկայինք մեր բաժին պասիլկեքով: Ուրախ կբանայինք պասիլկեն ու ընտեղ՝ թոզ էր. մենակ իրանց թոզը սիրուն ուպակովկով էր»:

Ահա եւ կառնչուինք այդ օրերու ու դժուարութիւններու հանրագումարին ու այս նկարագրութիւնները սոսկ թեմատիկ կամ միջանկեալ պատումներ չեն, այլեւ ինքզինքդ լաւ ճանչելու յուրատեսակ հայելի եւ դժնդակ փորձութիւններուն մէջ կամ ետք՝ մեծատառով մարդ մնալու արվեստ եթե ողջ մնացիր, ուրեմն կը պարտաւորիս շարունակել մեռելներուն կեանքն ալ. ի՞նչ է այս մեկը, ճակատագրի հեգնանք, հիվանդ ուղեղի մարմա՞ջ, դժբախտութենէն պատւով դուրս ելլելու ձգտո՞ւմ, անմարդկային ցաւերու բժշկո՞ւմ, թէ՞ անհատի կամ ազգային ինքնութեան շարունակական պայքար:

Մէկը միւսի մէջ շարունակուող նկարագրութիւնները աչքիդ առջեւ կը բանան եւ կը տարածեն անպատմելին շոշափելի դարձրած, անասելին հոգիիդ խորքը թափանցող, անտեսանելին ու անլսելի ձայները յոյզերու ռիթմով բաբախող կեանքդ, ուր կը փոխուի ժամանակը, ու անոր արտացոլանքը կարծանգանքուի մարդուն մէջ, ինչպես օրինակ՝ յաջորդ պատմուածքին՝ «Վերասյա կեանք»-ին մէջ այս պատմուածքը նոյնպէս շարունակութիւնն է նախորդին, սակայն հոս գոյները կը խտանան, երբ մարդ դէմ-հադիման կը կանգնի իր սեփական վարք ու բարքի առջեւ, զայն տեսնելու կամ նոյնիսկ չտեսնել տալու արժեհամակարգին, անոր կը հաւելնայ մարդկային բարձր գիտակցութիւնը, հարազատին, ազգականին կամ ընկերոջ օգնելու ու կարեկցելու ունակութիւնը, ցաւը կիսելու հայուն ինքնատիպ կարողութիւնը:

Ընտիր է Լիլիթի
**«Օբշի բաղնիքի նամուսով օջիլները»**
(հանրային, ընդհանուր բաղնիքի պատուախնդիր օջիլները)

Գունագեղ պատում մը, համեմուած գիւմրեցուն յադուկ սուր հումորով:

Պատկերային արտակարգ լուծումներով հարուստ է այս պատմուածքը, որ կարդացած պահերուդ անհնար է, որ կերպարներն իրենց համով-հոտով զրոյցով անցնին մտապատկերիդ առջեւէն, ինչպէս բեմադրուած ներկայացում մը:

Գրքին յաջողութեանը գրաւականներէն մին այն է, որ թեւ նիւթը ինքնին ծանր է ու ցաւագին, սակայն նոյնքան կեանքոտ ու կենդանի, որ կուզես տեւալ նկարագրութիւնը անգամ մը եւս ընթերցել ու զգալ ամբողջապէս:

«Ամսվա վերջի կիրակին բաղնիքի օր էր: Ըդիկ հենց ընպէս չէր որոշուած, յադուկ հաշուարկ էր, օր դեկտեմբեր ամսվա վերջի լողնալը հաշվվեր մաքուր հոգով նոր տարի մտնելուն:

Լսերի (լոյսերի) հովարային անջատումները հաշվի չէին առնի բաղնիք գալողի մաքրվելու երազանքը, ու կեղներ, օր լողնալու կեսից կըմարեր լոյսը: Սաղ վախվորած փռփուռները կըլվային, մէկ էլ խավարի միջից մեկըմ սատանա տեսածի պէս կճվար (կը պոռար) ու սաղ բաղնիքի չբլաղ (մերկ) կընգտիք (կանայք) կծայնակցեին իրար: Մինչեւ կիսակնային, թէ ինչ էղաւ կռնա դուրսը ժաժք է, մէ տըղամարդ հերոսաբար կանցներ մեջտեղից՝ ֆանառիգը (լուսարձակը) ձեռքին, բայց աչքերը փակ ու կսեր. «Լողցեք, լողցեք. հըմի դվիժոկը միացնեմ, լուս կեղնի»:

Ծիծաղաշարժ պահ մը, որ զարմանալիօրէն սիրտդ կը ջերմացնէ, երբ մարդկային բանականութենէդ վեր բարձրացող յոյզը անգամ այսպիսի դժվարութեան մէջ ունակ է խնդացնելու...

**«Տրալեբուսի ֆոկուզները» և «Թազա տարին ու հին ադաթները» պատմուածքները**

Հայաստանը այս օրերուն յայտնի էր քաղաքին իւրահատկութիւն տուող իր տրալեբուսներու՝

Ինչպես կսէ Լիլիթ.

«Ամերիկական ամենավտանգաւոր կառուսելները գլուխները քարն էին տալ մեր կարմիր տրալեբուսի քով:

Այդ օրերուն վատթարացած էր հանրակարգերուն շարժը, բայց տրալեյբուսները իրենց պատմական առաքելութիւնը կը շարունակէին ընել ու յոգնութիւնդ շալկած անխոս ու անտրտունջ կը տեղափոխէին քաղաքացիները դեպի աշխատանքի կամ տուն: Ու գրեթէ միշտ այնքան լեցուն, լեփ-լեցուն կըլլային անոնք, որ հազիվ ոտնաչափ տեղ մը կը գտնէիր ու գրեթէ բաց դռէն դուրս կախուած կը փորձէիր բարեյաջող տուն հասնիլ»:

Պատմուածքին մնացեալ նկարագրութիւնը կը ձգէ ձեզի, որ վստահաբար պիտի ըմբոշխնէք գիրքը ունենալէն ետք:

Իսկ ո՞վ կը կասկածէր Հայերուն, մանաւանդ Ամանորի եւ Սուրբ ծննդեան տօներուն յատուկ հիւրասիրութեան ու առատաձեռնութեանը:

«Թազա տարին ու հին աւանդույթները» կը պատկերեն հայ մարդուն այս կողմէն դիտուած առանձնայատկութիւնները ու յատկապէս գիւմրեցիին յատուկ հիւրընկալութիւնը ու ջերմութիւնը: Երբեք պիտի չզգայիր, որ իրենց օճախին մէջ կիսատ մնացած կեանքեր կան, իրենց հիւրասիրութեան չափն էլ իրենց սրտին պէս մեծ է ու ջերմ եւ թէեւ «պատի պապայի» եւ կամ ժաժքի երախը կուլ գնացած մարդոց ու պզտիկներու լուսանկարները քեզի կը դիտէին, սակայն հրամցուած հացն ու ջուրը փափուկ կիջնէր կոկորդէդ, որովհետեւ սիրով դրուած էր հիւրին առջեւ ու ինչքան ալ անոնց յոյզերը պատերուն վրայ կախուած մնացին, ինչպես՝ «Չվանին մնացած հույսեր» պատումին նկարագրութիւնն է, անոնք չչարացած ու կենսախիզդ մնացին:

Երկրաշարժէն 30 տարի ետք պարզուող իրականութիւնն է բնութագրուած այստեղ բազմիմաստ ու նաեւ երգիծական հումորով, որ անգամը եւս կուգայ փաստելու անոնց անընմբռնելի լաւատեսութեան ուժը, մահը կեանքով շարունակելու բացառիկ կարողութիւնը, որ յատուկ է մեր ազգին:

Իսկ ահա վերջին պատմուածքը **«Կարմիր կոշիկներով սատանէն»** հոգեբանական զգացումներու, ցաւի, որն այլեւս չի տեղաւորուիր հոգիիդ մէջ, գագաթնակետին հասած նկարագրութիւնն է: Խտացած են մարդու, որպէս տիեզերքի բնական շնչող էակի յոյզերը ու ապրումները դուրս ելած է մարդը ինքզինքէն: Ոչինչ է աշխարհը. միայն սին օրերու անիմաստ շարան ու պայքարիլն անգամ չունի իմաստ, երբ չկան այլեւս ընտանիքդ, զավակներդ, կինդ, ընկերներդ, տունդ ու հայրենիքդ ծուխի ու փոշիի մէջ թաթախուած է, ու անկարող ես այս ամէնը հասկանալ ու մէջդ տեղաւորել, բացատրութիւն անգամ չունիս...

Բարձր գեղարուեստական շարադրանքով Լիլիթ կը ներկայացնէ տղամարդու մը այս ապրումները, որոնք թէեւ մարմնաւորուած էն մէկ կերպարի մէջ, սակայն այդ ժամանակաշրջանի դէմքն էն: Եւ աշխարհին երեսին գոյութիւն չունի որեւէ այնպիսի չափման միաւոր, որ կրնայ չափորոշել ցաւի աստիճանը, քանի որ յոյզերու սանդղակը դուրս է պատկերացուած բոլոր սահմաններէն:

Գրքեր կան, որ կարդալէն ետք, որոշ ժամանակ անց, կուզես նորէն վերադառնալ ու վերընթերցել: Այս գիրքը ինծի համար կը պատկանի այդ շարքին ու թէեւ ամէն անգամ պիտի նորոգուի ցաւին ապրումը, սակայն որպէս մարդ, հայ մարդ նաեւ պիտի ամրապնդուիս ուժովդ, պիտի հպարտանաս տեսակովդ, պիտի գոտեպնդուիս գոյութեամբդ, քանզի, ինչպէս կսէ Լիլիթ, անգամ «Զինվորի սապոգներից հայրենիքի հոտ կուգայ...»:

Կամիլա
ԵՐԿԱՆԵԱՆ- ՔԵՇԻՇԵԱՆ
Պեյրութ 2018թ.




## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄՇՏԱՄՆԱ ԽՈՐՀՈՒՐԴՈՎ

Հայաստանում, որտեղ էլ լինես՝ անհնար է, որ մի հինավուրց եկեղեցու, մի Հրաշագործ Ավետարանի, մի հզոր ամրոցի պատմության չառնչվես: Եթե անգամ պատմության քարե մեն մի բեկոր, թեկուզ մագաղաթի մի էջ կամ ամրոցի մեկ որմ պահպանված լինի: Հայաստանի այդպիսի վայրերից է Վահրամաբերդը:

Գյուղը կոչվում է միջնադարի հայ իշխան Վահրամ Պահլավունու անունով: Այս չքնաղ վայրում է խոյանում 10-րդ դարի Մարմաշենի վանական համալիրը: Այստեղ՝ իշխանական երբեմնի նստավայրում, զուլալ հովերի գրկում, աղոթալիր երկնի ներքո ծնվել է Վահրամաբերդի պոետը՝ Հարություն Սարգսյանը: Մի խումբ մտավորականներով գյուղ գնալու առիթը բանաստեղծն էր և նրա ԳՐԱԿԱՆ 5-րդ արու զավակը՝ «Ուշացած խոստովանություններ» բանաստեղծությունների ժողովածուն: Գյուղի ակումբում հավաքվել էին գրողի համագյուղացիները, գիր ու արվեստ սիրող մարդիկ, բանաստեղծի հարազատները: Գյուղը լայնահուն սիրտը բացել ու շռայլորեն իր սերն ու գնահատանքն էր փոխանցում հայրենի շենի հող ու ջրով սնված, մարտական ուղի անցած բանաստեղծին: Երկուստեք նվիրական խոստովանություններ՝ հայրենի տան ու փոխադարձաբար, պոետի սիրո և կռվի կրակներով թրծված տողերով:

ՀՈՒԶԻՉ ԷՐ ԽՈՈՐԻՄԱՍՏ ԵՎ ՊՈԵՏԱԿԱՆ. Մթնոլորտը լի էր Հարություն Սարգսյանի բանաստեղծության էներգիայով, գրական ցերեկույթի ողջ ընթացքում հնչեցին ազգային երգեր ու ոգեշունչ պարեր գյուղի շնորհալի երեխաների մասնակցությամբ: Պոետին շնորհավորեցին նրա սիրելի ուսուցչուհիները, որոնցից մեկը՝ բարեմաղթանքի խոսքը տեսաձայնով էր փոխանցել:

«Ուշացած խոստովանություններ» բանաստեղծությունների ժողովածուն ԱՆՊԱՐՓԱԿ ՍԻՐՈ ԳԻՐ է- կյանքից դեպի կյանք՝ ապրածի, աստվածային Սկզբի փիլիսոփայություն: Սա վկայեցին նաև Հարություն Սարգսյանի գրչընկերները՝ բանաստեղծ Ռոբերտ Եսայանը, Մնացական Մուրադյանը:

Բանաստեղծին իր ողջույնի և շնորհավորանքի խոսքն էր հղել ՀԳՄ նախագահ բանաստեղծ Էդվարդ Միլիտոնյանը: ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը նշեց, որ Հարություն Սարգսյանի բանաստեղծ և մարդ տեսակները նույնանում են, նա նույնքան անկեղծ է, թե՛ մարդկային տեսակով, թե՛ գրով. նա պոեզիայում էլ ստեղծագործում և ապրում է առանց կեցվածքի՝ ինքն իրեն փնտրելով, երազելով մի ավելի կատարյալ աշխարհի մասին:

Բանաստեղծի կողքին են նրա հավատարիմ կողակիցը՝ Անահիտը, չորս արու զավակները, որոնցից երկուսը Հայոց ազգային բանակի սպաներ են: Գրական ցերեկույթի անակնկալը Հարություն Սարգսյանի թոռների անմիջական ելույթներն էին. նրանք ընթերցեցին բանաստեղծություններ պոետի դարձյալ նոր լույս տեսած ՄԱՆԿԱԿԱՆ ժողովածուի ստեղծագործություններից:

Անդրանիկ Կարապետյանը բանաստեղծին հանձնեց ՀԳՄ վկայական գրական վաստակի համար:

Ոչ ոք հենց այնպես չհեռացավ դահլիճից. յուրաքանչյուրն իր հետ մի քնքուշ, մի խիզախ ու մի ապրեցնող տող տարավ, մի խրոխտ մեղեդի, իսկ բանաստեղծը՝ ՍԻՐՈ ՄԵԾ ՉԱՓԱԲԱԺԻՆ- արարող մարդու համար լավագույն գնահատականը:

... Իսկ նախասրահում Մինաս Ավետիսյանի «Արմենիա» որմնանկարի արևային գույներն ու գծերն էին՝ արվեստի մշտամնա խորհուրդով:

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ

## ՏՈՂԻ ՄԵՐԿՈՒԹՅԱՄԲ Է ԽՏԱՑՆՈՒՄ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԸ

Հարություն Սարգսյանի տողերը հայրենիքը բացահայտող միջոցներ են, որոնց առանցքը սերն է: Խոստովանությունը ինքնաարտահայտման ափերին մոտեցող նավ է, որի մեջ սպասումը առաջընթացի առագաստն է, հավատի լույսը, որ ալիքից ալիք են փոխանցում ոգևորության ճայերը:

Իսկ երբ սերը դառնում է աշնան երազ, արարումով ծնված տողերը հուզում են մեզ նաև հուշի արցունքներով: Բանաստեղծը նայում է իր խորքը տողերի կայծկլտուն աչքերով, հասկանում, որ մոռանալու համար ուժ է հարկավոր, ինքնահաստատվելու համար՝ սիրո արծագանք: Հիշողության ծառից կախվում է քնարական մի տող. «Դու ինձ մոտ կգաս այրող համբույրով»:

Հարություն Սարգսյանի գրքերում կատարյալ տողեր և հուզիչ պատկերներ շատ կան, որոնք խոստովանության ճանապարհին վառվող լապտեր են: «Հազար բառ եմ գրել, ջնջել ես մի տողում»,- սա ստեղծագործողի աշխատանքը բնորոշող բանաձև է, որ հեղինակին միշտ պահում է գեղեցկությամբ արբած ու լիցքավորված, չհոգնեցնող որոնումներով մղում դեպի իդեալի լույսը: «Կարոտը սիրով իր բույնն է հյուսում»:

Հայրենիքի զինվոր-բանաստեղծը «Հողի արցունքը» շարքում կատարում է նորանոր բացահայտումներ. «Ականը սիրում է հերոսներ ու արյուն», «Թե չլինեն այսքան քարեր, // Ինչպես կարդամ պատմությունս», «Հողի արցունքն է աղբյուրից հորդում», «Խրամատն է քո տունը»:

Մարտական երգերը Հարություն Սարգսյանի քնարի զորեղ մասն են, որոնք տարաբնույթ ռիթմերով ամբողջացնում են զինվորական արշավների և պաշտպանական կռիվների ոգեղեն կոլորիտը: Հայի դարավոր անկոտրում ոգին է փոխանցվել մարտիկ բանաստեղծին, ով իր արիական շունչ տողերը գրել է ոչ միայն գրչով, այլև՝ արյունով:

Հողապաշտ բանաստեղծը հուզում է ընթերցողին նաև կարոտի քնարով, որը ոչ միայն սարսուռով, այլև ջերմությամբ ու կրակով է հյուսվում. հեղինակը լռում է, թե խոսում՝ տողի մերկությամբ է խտացնում ապրումների ուժը:

Կյանքը հեքիաթ դառնար
այսօր,
Ես մանկանայի գոնե մեկ օր,
Իջնեի վանքի ձորս կարոտ՝
Արահետով լերկ, քարքարոտ:
Արփաչայի կանաչ ափին
Մեջքս հենեի տաք ժայռերին,
Կուրծքս թրջեր, հովացներ
Ալիքների ջրափոշին:

Կարոտը նոր խորքեր է թափանցում հոգու ճառագայթով, բացում է երազի կապույտ ծաղկաթերթեր՝ արբշիռ լույսեր սփռելով կյանքի շարունակվող աստիճաններին:

Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

## Նանեն

*Եվ մահամերձն ալ կուզե*
*երկու բան.*
*Նախ կյանքը, վերջը լացող*
*միր վրան:*
*Պ. Դուրյան*

Կաչաղակներն աղմկում են: Աղմուկը խանգարող է ու ուղեղդ սղոցող... Նրանց ձայնն ավելի է բարձրանում, ջղագրգռության հասցնում: Սև են նրանք. սև՜, սև՜, սև՜... Եվ այդ ձայնը մեզ տխո՜ւր, տխո՜ւր է դարձնում... Նորից աղմուկ՝ ջղագրգռություն: Փակե՜լ են նրանք պատուհանը, փակել արևի՛ ճամփան: Իսկ քիչ հեռվում աղավնին է՝ ամբողջովին սպիտակ ու լույսերի մեջ: Կաչաղակները թռչում են նրա կողմը, կտցահարում աղավնուն: Սպիտակ կրծքից արյուն է կաթում՝ կամաց-կամաց, կաթ-կաթ... Արյունը նրան չի սպանում, չի մեռցնում. ներսն է ցավեցնում, սիրտը այրում...

Ձմեռ է... Ցուրտ... Դուռն աղմուկով բացվում է, և սենյակը լցվում է գարնան շնչով: Նանեն է... Ձայնը բարձր է, զիլ, ինքնավստահ... Խոսում է, աղմկում է, կարկաչում: Կենսախինդ գարուն է Նանեն, ձմռան ցրտի միջից աչքերը բացած ձնծաղիկ... Միամիտ է Նանեն: Ցրտից չի վախենում, սառնությունը չի զգում. պատմում է այն, ինչը միայն ինքը պիտի գիտենար, ինչն իրենն էր ու իր գաղտնիքը:

Նանեն ուրիշ զորամասից է եկել... Նոր զորամասում պաշտոն ունի: «Հ....յան Նանե, 22. 12. 2014 թ.»: Վարդագույն օրագիրը այսպես է թվագրել: Նոր կյանք է սկսվում Նանեի համար. բուժկետի պետ է: Ծաղիկներ է նկարել նոթատետրում, երկու կպած, իրար ամուր փարված մոմեր ու փոքրիկ, ծաղկի նման աղավնու պոչ, հա՛, աղավնու պոչ, որովհետև հաջորդ էջին էլ է նկարել, առանց ծաղիկների, մենակ ու կիսատ աղավնի: Երբեմն Նանեն բաց գիրք է, մեկ էլ՝ անծանոթ գրքի էջ: Հանկարծակի կարող է բորբոքվել, վիճել, հետո էլ հոնգուր-հոնգուր լալ, լալ բարձրաձայն ու անդադար... Ո՞վ գիտի՝ ինչու է լալիս, ո՞ւմ է բան ասում, կամ ո՞վ կհասկանա նրան ... Զգացմունքային է չափազանց. չնչին ուշադրությունից ուրախանում է: Գեղեցիկ էր, նկատում էին իրեն... Հրճվում էր երեխայի պես...

Մի օր Նանեի մոտ ներարկիչներ էին տեսել...

Ու նորից կաչաղակներն աղմկեցին... Նորից թռան աղավնու սիրտը կտցահարելու, վերքը թարմացնելու և արյուն բերելու... Լացեց, հուզվեց, բացատրեց իրողությունը: ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ...

Քչերն իմացան, շատերը լռեցին, ու էլի չկարեկցեցին, էլի անտարբերության մատնեցին ... էլի ձմռան ու ցրտի մեջ մնաց մենակ՝ սիրո ու ջերմության կարոտ...

Գարուն էր... Շիրակի պաղ գարուն... Ցուրտ է գարունը մենակ հոգիների համար: Նանեն հիվանդացավ թոքաբորբով: Մայրն ու տատը եկան խնամելու, ոտքի կանգնեց: Դեռ թույլ էր ու ապաքինվելու տեղ ուներ: Բայց գործեր կային, ծառայողական պարտականություններ...

Բժշկուհի էր, լավ աշխատող ու պարտավոր էր գնալ զորավարժությունների... Դեռ չապաքինված՝ զորավարժությունների գնաց:

Պոլիգոնում նեղացրել ու վիրավորել էին Նանեին: Զորավարժությունները կիսատ թողեց ու վերադարձավ զորամաս: Ճամփորդ էր, վարձով տունը հանձնել էր, իսկ նոր տուն չէր ուզում վարձել: Գնալու էր գործուղման... Օրերն էր հաշվում, գուցե այնտեղ մնար ու էլ չվերադառնար զորամաս: Ավելի բարձր պաշտոն կունենար, փոքր-ինչ հանգիստ կլիներ, գուցե իր տեղը գտներ:

Մի անգամ Վաղոյի հետ ֆիլմ դիտելու գնաց, նորից հույսը արթնացավ, նորից իր սիրո տերը կլիներ... Կյանքը գույն կստանար... Երջանիկ կլինեին...

Սպասումը երկար էր, իսկ գործուղման գնալը ձգձգվում էր... Երեք օր մի տեսակ դեմքը ուռած էր: Երբ հարցրին, թե ինչ է կատարվում, խոսքը կտուրը գցեց, ասաց՝ անքնությունից է... Տրամադրություն չուներ... Իրեն չէր հետևում, ուտում էր այն, ինչ ուզում էր, ինչը հաստատ գիտեր, որ հակացուցված է... Մեկին էլ ասել էր, որ իրեն քիչ է մնացել ապրելու, շատ քիչ... Տարօրինակի տեղ էր դրել ու ոչինչ չէր հասկացել...

Մի օր էլ հազիվ հասցրին Երևան... Կոմայի մեջ էր ընկել ու մի կերպ արթնացել... համոզել էին, որ հաց ուտի... Նեղվել էր, երեսը դարձրել ու լացել... Վաղոյին էր ուզել... Ինչ-որ մեկը մորից գաղտնի լուր էր ուղարկել, որ Վաղոն գա... Եկել էր... Թափառել հիվանդանոցի բակում, թափառել ու լացել... Բայց ներս չէր մտել... Վախեցել էր, որ Նանեի մայրը հիվանդանոցում աղմուկ կբարձրացնի ու ներս չի թողնի... Կմեղադրեր, ու ներս չէր թողնի... Վերև բարձրանալն իմաստ չուներ...

Նանեն մեռավ՝ ջահել, սեր չվայելած, քնքշանք չտեսած ... Գարուն էր... Ցուրտ գարուն... Մայրը լացեց, մարդկանց ու իր բախտը անիծեց...

Մղկտաց ու լացեց Վաղոն... Թաղումը հեռվից դիտեց... Մենակ մնաց իր տխրության ու թախծի հետ: Եկավ զորամաս... Իր հետ վերցրեց Նանեի ծաղիկները, այն ծաղիկները, որ երկուսով էին աճեցրել... Իրենց սիրո ծաղիկները: Պատմեց իրենց տխուր սիրո մասին... Բաժանված էին, բայց միասին էին ապրում... Բաժանված էին, որովհետև միասին ապրելն անկարելի էր, մարդիկ չէին թողնում, խանգարում էին, որ միասին լինեին... Ո՞վ էր մեղավոր... Նանե՞ն... Հիվանդությո՞ւնը... Չէին թողել, որ միասին լինեին... Գուցե Վաղոն կկարողանար հաշտվել Նանեի հիվանդությանը... Գուցե Նանեն ջերմության շնորհիվ կկարողանար դիմադրել ... Գուցե...

Ի՞նչ մնաց Վաղոյին... Սիրո ծաղիկը, որ պիտի գուրգուրի Նանեի փոխարեն և ծանր հիշողությունները...

Նանեից մնաց հիշատակ մի նկար ու հուշատետրը... Վարդագույն գրքույկը, որի վրա խծբզել էր սևով... Սև՜, սև՜, սև՜... Սև՜ ցավ...

27 տարեկանում էլ Նանեն չկար... Նոթատետրի մեջ գրել էր Հ. Սահյանի «Ինչ անեմ, մայրիկ...» բանաստեղծությունը.

*... Եվ իմ փոխարեն*
*Իմ ցավն զգացող*
*Ու լացող չեղավ:*
*Ի՜նչ անեմ, մայրիկ...*

Ի՜նչ անի մայրիկդ... «Բա ես ի՞նչ անեմ, չկա՛ Նանեն, չկա՛ Նանեն...»: Մայրդ տեսավ վերջին արցունքդ ու թաց թաշկինակդ... Ցավդ Աստված տեսավ... Սխալներդ մարդիկ չներեցին, քո տխուր հոգին ու քո վիշտը Աստված տեսավ...

Մահիցդ հետո էլ քեզ չհասկացան... Ոչ էլ մորդ հասկացան ու նրա ցավը... Հիշատակդ չի թառամել... Մի անգամ բժիշկ Զավենը քեզ երազին տեսավ... Դու անմեղ ժպտում էիր... Դու ժպտում էիր...

Կաչաղակներն աղմկում են, ուղեղդ սղոցում: Իսկ քիչ հեռվում աղավնին է՝ ամբողջովին սպիտակ ու լույսերի մեջ:

Նարինե
ԿԱՐԱԽԱՆՅԱՆ
(Քարհանյան)
Բան. գիտ. թեկնածու
16.04.2016

# «ԵՐԳՈՂ ԱՐՑԱԽԸ» ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

«Հույսի, կարոտի, հավատի երկու ժամ...»,-այսպես ամփոփեց հիացումի ու երախտագիտության իր խոսքը ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը: Եվ հոգեցունց համերգի ավարտին բեմից հնչած միակ սրտաբուխ խոսքը չէր սա. շուշեցի-գյումրեցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանը, կրկին Արցախն ու Շուշին հոգում՝ հայրենակարոտ ու վարանդասեր հանդիսատեսի մի բույլ կա: Ընդհանրապես դահլիճում չկար մեկը, ում աչքերը արցունքների թացից ու հուսո ճիչից չշողային: Իսկ համերգի ավարտին ոչ ոք չէր ուզում լքել փոքրիկ վարանդացի-շուշեցիներին և, իհարկե, խմբի գեղարվեստական ղեկավարին՝ Համազգային հայ կրթական և մշակութային միության կենտրոնական վարչության ատենապետ, տաղանդավոր երաժիշտ և խմբավար Զաքար Քեշիշյանին:

Երգ՝ հանուն տունդարձի կամ տունդարձը՝ երգով՝ մանուկների և պատանիների՝ վստահաբար վաղվա իրենց օրրանը շենացնողների շուրթերից: Թրթռուն, նրբին ու խորը, անասելի խորը, նույնչափ հավատ ներշնչող ամենեցուն, ամենեցուն, ամենեցուն... Հային՝ հայ ոգում՝ առանց դույզն իսկ բացառության:

...Հայ Արցախը, հայ Շուշին, հայ «Վարանդան» երգում է, և երգը հնչում է Շուշիի ռադիոթերում՝ կենսալի-կենսատու-ապրեցնող... հար... Եվ սա ամենևին էլ խենթ երազ չէ...

Համերգը կազմակերպվել էր Արևելյան Ամերիկայի Կիլիկյան թեմի առաջնորդարանի և Սուրբ Լուսավորիչ Մայր եկեղեցու հովանավորությամբ և Գյումրու քաղաքապետարանի աջակցությամբ:

«Շուշիի ազատագրումն ու «Վարանդա» մանկական, պատանեկան և երիտասարդական պետական երգչախումբը տարեկիցներ են: Շուշիի անկումից հետո «Վարանդա» երգչախումբը Ստեփանակերտի մեջ կազմակերպեց «Երգող Արցախ» երգչախմբային համերգաշարը: 2024 թ. համերգաշարը իրագործվում է Հայաստանում» /համերգի ծանոթագրություններից է/:

Համերգաշարն այն մասին է, որ Շուշիի երգը չի մեռնում, և երգող Արցախը երբեք չի մեռնելու՝ իբրև հույսի, կարոտի և հավատի հավերժող ձայն...

Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Ավելի քան երեսուն տարի առաջ, երբ պոռթկաց Արցախ աշխարհը, երբ պայթեց արցախյան շարժումը, երբ ոտքի կանգնեց համայն հայությունը, հայ կյանք մտավ մի ԲԱՌ, որ կրում էր ոգի և ուժականություն: Այդ ԲԱՌ-ի վրա խարսխվեցին հաջորդական հաղթանակներ: Այդ բառը իր խորհուրդն ուներ. հուսադրում, ներշնչում ու ոգեշնչում, գոտեպնդում էր ու միացնում, մի հայտարարի բերում հայերին, որտեղ էլ լինեին: Այդ բառը ԵՌԱՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ-ն էր, որ հնչում էր ոչ միայն իր բառարանային իմաստով: Երբ կորցրինք այդ ԲԱՌ-ի խորհրդից բխող մեր ազգային զգոնությունն ու միաժամանակ հեռացանք մեր ազգային արմատներից ու արժեհամակարգից, հեշտ եղավ մեզ մասնատել, սևի ու սպիտակի բաժանել, արցախցու-հայաստանցու, հայաստանցու սփյուռքահայի պիտակավորումով տրոհել:

Երաժշտիս համար այն բարեհունչ էր այնպես, ինչպես «Մաքուր եռահնչյուն»-ը և ենթադրում էր ներդաշնակություն. ներդաշնակություն իրար հետ, ներդաշնակություն մեկ ընդհանուր տոնայնություն մեջ ու հզորություն. չէ՞ որ մեկ եռահնչյունը ավելի հզոր է, քան երեք առանձին հնչյունը: Պատահեց այնպես, որ մենք այժմ «մաքուր եռահնչյունի» փոխարեն ունենք այլ բան: Մեր եռահնչյան երեք հնչյունները, թեև նորից նույն տոնայնության մեջ, սակայն այժմ խժալուր եռահնչյուն են կազմում: Ապրում ենք այն դաժան իրականության մեջ, որն ունենք ու միգուցե որին արժանի ենք մենք մեծերս՝ չափահասներս: Սակայն մեզ հետ այս նույն իրականությունն է ապրում մատաղ սերունդը: Նա, որ մեղքի ամենադույզն բաժինն իսկ չունի այս ստեղծված իրականության մեջ, սակայն ում «գլխին է ջարդվում» հետևանքների մեծ մասը: Նրանք, որ մի օրից մյուսը միանգամից մեծացան, պապենական տուն ու տեղ կորցնելով, ծնող ու եղբայր կորցնելով, վիրավորի հոգսերով ու առօրյա կենցաղային բեռան տակ ընկնելով՝ կորցրին նաև իրենց մանկությունը: Չապրեցին այն:

Ահա երկրորդ տարին է, որ Արցախից հեռու մենք հավաքվում ենք այս պայմաններում:

Հավաքվում ենք ու երգում, որ մեղմենք մեր հոգեխոցը, որ ապրենք վիշտը՝ չթողնելով որ այն մեզ ծնկի բերի: Որ մնանք այն տոնայնության մեջ, այն հայտարարի տիրույթում, որտեղ մեր եռահնչյունները մաքուր են հիշվում: Որ նորովի ոգևորվենք ու ոգևորենք: Եվ որպես մեր վաղվա օրվա պայծառության առհավատչյա՝ մեր մաքուր եռահնչյունները վերհիշեցնեն վերոնշյալ ԲԱՌ-ի խորհուրդն ու կարևորությունը: Երգում ենք, որ մեր մեջ վառ ու թրթռուն մնա մեր Արցախ աշխարհը, որ առօրյան իր դաժան հևքով ու կշռույթով այն չհանի ո՛չ մեր լեզվից, ո՛չ մեր մտահորիզոնից, որպեսզի ամրապնդենք արցախյան մեր կյանքի պայծառ հիշատակները, որ չխամրեն մեր երազանքները, որ չզիջենք մեր երազանքները հաջորդ սերնդին, այլ ամեն օր գործենք դրանց իրականացմանն ի խնդիր:

ԶԱՔԱՐ ՔԵՇԻՇՅԱՆԻ ԽՈՍՔԸ
Շուշիի «ՎԱՐԱՆԴԱ» երգչախմբի
«Երգող Արցախ»
համերգաշարի առիթով

---




## ԳՈՐԾՎԱԾՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՇԻՐԱԿՈՒՄ (19-20 դար)

Կարինե Բազեյանի աշխատությունը նվիրված է Շիրակի գործվածքի մշակույթին, որը թեև մասամբ ներկայացվել է գեղարվեստական գործվածքի առանձին ճյուղերին վերաբերող տարբեր հեղինակների ալբոմներում ու հոդվածներում, սակայն համալիր և ամբողջական քննարկման չի ենթարկվել: Մենագրության մեջ նկարագրվել են ոստայնանկության մեջ մտնող բոլոր արհեստները, որոնք ներառում են աշխատանքի բոլոր փուլերը՝ նյութի մշակումից մինչև բարդ ու բարձրակարգ բանվածքների պատրաստումը՝ կանգ առնելով տեխնիկա-տեխնոլոգիական, գեղարվեստական, կիրառական յուրահատկությունների վրա: Առաջին անգամ գործվածքը դիտարկվել է նաև որպես ոչ նյութական մշակույթի կրող, ինչը դրսևորվել է շիրակցիների ընտանեկան, համայնական հարաբերությունների մեջ և տոնածիսական կյանքում:

Աշխատության արդիականությունն այն է, որ ընթերցողին է ներկայացվում հայոց արտադրական մշակույթի այն հնագույն ու հարուստ ժառանգությունը, որն այսօր մեծավ մասամբ չի պահպանվել, ինչի արդյունքում ժամանակակից սերունդը՝ այդ թվում նաև մշակույթին առնչվողները, չեն ճանաչում այն, ուստիև չեն տիրապետում գործվածքին վերաբերող եզրաբանությանն ու սխալ են գործածում մասնագիտական բառամթերքը: Այդ բացը լրացնելու համար կազմվել է մասնագիտական տերմինների բառարան, ինչը հնարավորություն կտա հստակություն մտցնելու ոստայնանկության տերմինաբանության մեջ: Հետազոտությունն ընդգրկում է 19-20-րդ դարերը՝ ներկայացնելով գործվածքի հետ կապված մասնագիտական զբաղմունքների զարգացման գործընթացն ավանդական արհեստներից ու տնայնագործությունից մինչև խորհրդային արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումն ու գործունեությունը:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ մինչ օրս հայոց մշակույթում գործվածքն ու դրա հետ կապված արհեստներն ամբողջական ձևով ուսումնասիրված ու ներկայացված չեն և այս աշխատությունն ամփոփում է գործել-հյուսելու հետ կապված բոլոր արհեստները, որոնք խմբավորվել են ըստ աշխատանքի գործընթացի հերթականության՝ հումքի մշակման, թել մանելու, բուն գործվածք հյուսելու, գեղարվեստական գործվածքի պատրաստման և գործելու հետ կապված այլ արհեստների: Յուրաքանչյուր զբաղմունք նկարագրվել է հաշվի առնելով նաև դրա ինչպես արհեստավորական, այնպես էլ տնայնագործական բնույթը:

Կարծում ենք՝ մենագրությունն օգտակար կլինի ինչպես գործվածքով զբաղվողների, ուսումնասիրողների, այնպես էլ թանգարանների աշխատողների և ուսանողների համար:

---




«Ալեքսանդրապոլի մշակութային կյանքը» հանդիսանում է եռապատման առաջին մասը /հաջորդիվ՝ «Լենինականի կերպարվեստը 1924-1991 թթ. », «Գյումրու կերպարվեստը 1991-2020 թթ. »/:

Աշխատանքը նվիրված է Գյումրի քաղաքի պատմական հին շերտի՝ Ալեքսանդրապոլի մշակութային կյանքի ուսումնասիրությանը: Սա ամբողջական հետազոտություն է, որը ներառում է պատմական, ազգագրական, թատերագիտական, մշակութաբանական, երաժշտագիտական, ճարտարագիտական, արվեստաբանական ոլորտները: Նման ընդգրկուն քննություն կատարելու համար ուսումնասիրել ենք մեծաթիվ արխիվային նյութեր և փաստաթղթեր, որոնք սիրահոժար մեզ տրամադրել են «Կումայրի» արգելոց-թանգարանը, Ջիթողցոնց տուն-թանգարանը, ինչպես նաև անհատները:

Իբրև սկզբնաղբյուր օգտագործված են շուրջ չորս տասնյակ գրքեր, ամսագրեր և հոդվածներ՝ Ալեքսանդրապոլի պատմաաշխարհագրական նկարագրի, ազգագրության (Կ. Կոզմոյան, Վ. Ղուկասյան, Կ. Սեղբոսյան), թատրոնի (Ռ. Մադոյան), գրականության (Կ. Դուրգարյան) ուսումնասիրության վերաբերյալ: Մինչ օրս չկա որևէ հակիրճ ձեռնարկ կամ հոդված՝ Ալեքսանդրապոլի գեղարվեստական կյանքին առնչվող:

Հետազոտությունը ներկայացնում է քաղաքի կազմավորման և զարգացման պատմությունը, վերելքի նախապայմանները, Ալեքսանդրապոլի կարևոր մշակութային միջոցառումների և իրադարձությունների նկարագիրը՝ սկսած XIXդ. սկզբից մինչև 1924 թվականն ընկած ժամանակաշրջանը: Հուսով ենք՝ այն ոչ միայն կլրացնի գեղարվեստական կյանքին առնչվող բացը, այլև կամբողջացնի Ալեքսանդրապոլի՝ իբրև կարևոր մշակութային օջախի նկարագիրը:

Գիրքը լույս է տեսել ՀԱՄԱԶԳԱՅԻՆ հայ կրթական ու մշակութային միության Գյումրու գրասենյակի աջակցությամբ և Կատեա Քուշերեանի մեկենասությամբ:

Արաքս
ՄԱՐԳԱՐՅԱՆ
արվեստագիտ. թեկնածու

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

### ԱՍՏՂԵՐԷՆ ԻՋԱԾ ԿԻՆԸ

Քալել չէր գիտեր
Ամբողջ կեանքը թռչեր էր
Երազները թեւերու պէս հագած

Արթնցեր էր լուրթի երանգներուն մէջ
Վարգեր հովերուն ետեւէն
Եւ համտեսեր էր արեւը

Իջեր էր
Եւ քալել չէր գիտեր

Քալել չէր գիտեր
Բայց կը թռչկոտէր գագաթէ գագաթ
Կը փնտռէր հոտը մանկութեան անցած

Իջեր էր գրկած
Աստղերուն փայլքը
Անոնց բոցը պաղ

Չկար լեռը սեւ
Ու չկար գագաթ
Միւս աստղերուն հետ թառելու համար

***

Աստղերը թեւաւոր իջան
Թաց աւազներուն
Եւ անոնց փայլքը
Լուսաւորեց կատաղութիւնը
ալիքներուն

Իսկ կինը
Որ ալ սորվեր էր քալել
Ջսպելով ցաւը անտանելի

Դրաւ գլուխը փրփուրներուն
Եւ գրկած երազը սեւ
անտառներուն
Քուն մտաւ
Երազելով վարդայեղեղ
արշալոյսը:

### ԱՍՏՂԱՒՈՐ ԿԻՆԸ ՈՐ ՍԻՐԱՀԱՐՈՒԵՐ ԷՐ ՀՈՂԻՆ

Իջաւ թեթեւ ծփանքով
Հողին ուր այնքան գաղտնիքներ
կային

Բայց եթէ կեանքը
Չի դիմանար լռութեան
Հապա ինչպէս դիմացաւ
գաղտնիքներուն
Աստղածորան գիշերներուն
Սեւ անտառներու կորուստին

Աստղաւոր կինը
Իջաւ
սուզուեցաւ հողին
Խառնեց արիւնը կանաչին
Եւ սպասեց

### ԿԻՆԸ ԱՍՏՂԵՐԷՆ՝ ԸՆԿՈՅԶԻ ՊԷՍ

Կանաչ թարմ ու լեղի
Քաղցրանալու երազը ամուր
բռնած
Բջիջներուն մէջ

Աշունը քաղեց գարնանացումը
Բայց չմահացաւ
Ճերմակ մնալու գաղտնիքը մէջը
Փնտռողին համար:

### ԱՍՏՂԱՓՈՇԻ

Ամէն գիշեր
Աստղերէն ծնած կինը
Կը մօտենայ ծանրօրէն գինով
Աստղիկին
Կը հագնի անոր յոգնութիւնը
Տառապանքը
Եւ իր աստղային հանդերձները
Անոր տուած
Կը հսկէ քունը

Կը մօտենայ որդեկորոյս
Անահիտին
Եւ անոր զաւկին դէմքը հագած
Կը ցօղէ ցաւը

Կը մօտենայ շատերուն
Աստղափոշի ցանելու
Եւ անոնց ցաւը գրկած
Կը վերադառնայ
Սեւ անտառներու մխիթարանքով
Ինքզինք լուալու:

## Սարգիս Քէլ Խաչերեան

Պէյրութ – Լիբանան

### ՁԱՐԹՆՈՒՄ

Եկուր մայր իմ
հոգիս այսօր կոկուիլ կուզէ
ամէն առտու թողած անկողինիս
պէս

այս օր
մէջս ննջող մանուկը
արթնցաւ:

### ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ

Մենք բոլորս ջրվէժ
մայրս շատրուան
մենք բոլորս վայրէջք
մայրս թռիչք
մենք բոլորս ժամանակաւոր
մայրս մշտական
մենք բոլորս տերեւաթափ
մայրս ծլարձակում
մենք բոլորս ցոլացում
մայրս հայելի
մենք բոլորս վերոյիշեալ
մայրս մենք բոլորս:



## ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

### ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆ

Եթէ խորհիս,
Թէ հողն է լոկ մեկնակէտը,
Ուրկէ օր մը թեւեր առած
պիտի թռչիս աստղերն ի վեր,
Դուն կը գտնես քու կորուսեալ
դիմագիծը
Ու կ'ըմբռնես թէ ինչու
Արշակունեաց Հայոց արքան
Անյուշ բերդի նկուղին մէջ
ամէն անգամ երբ կը կանգնէր
Հողին վրայ Հայաստանի,
Կը շողային աչքերը կոյր,
պայծառութեամբ լուսածագի …

***

Թիթեռի նման
թեթեւ կը զգայինք
Երբ հովը մեզ կը մղէր
մեր ճանապարհին.
Ճամբեզրի
Ցօղունները եւս,
Հովու շոյանքէն տարուած
մեր քայլերուն զուգահեռ
Կը թեքէին.
Հիմա,
փոթորիկներ կը խաչածեւեն մեզ
մեր ճանապարհին.
հոգի՛ս, նմանի՛ր այն թեւաւորին,
որ թռչիլ գիտէ:

## ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

### ՄԻ՛ ԱՐԹՆՑՆԷՔ…

Լուսաւոր երաժշտութեան նման,
Երազներուս նկարներուն
կարօտովը,
Միտքս տառապող հին ցաւերով,
Հոգեկան տեւական պոռթկումով
քնացած,
Մի արթնցնէք.
Թող երազեմ յարութիւնը ցեղիս:
Դարերու կնճռոտ ճամբաներու
վրայ,
Ազգիս էջերէն ջնջուած
պատմութիւններով,
Հերոսներու արեան մէջ
թաթխուած դրօշակով,
Իբրեւ միակ ճամբորդը
երազներուս.
Մի՛ արթնցնէք.
Թող երազեմ յաղթանակը ցեղիս:
Միտքս տառապող ազգիս հին
ցաւերով,
Ճակատագրի քովէն անցնող
ապրումներով,
Ապերախտ աշխարհին մէջ յոյս-
լոյս փնտռելով,
Քալելով օրերուս կաղ շարանով.
Կը խնդրեմ, մի՛ արթնցնէք.
Թող երազեմ գիտակցութիւնը
ցեղիս:
Կուրծքիս վրայ աղօթք մը
սեղմելով,
Արդարութեան եւ խաղաղութեան
կանչերով,
Իբրեւ թուղթի եւ գրիչի մոլի,
Միշտ ճշմարտութիւն որսալով,
Մի արթնցնէք.
Թող երազեմ միասնութիւնը
ցեղիս:
Հաւաքելով մտքիս բոլոր թելերը,
Եւ սրտիս խոր տրոփումով,
Նոր լոյսին բացող մտքերով,
Առանց ոսկեհունչ բառերու,
Ձիս արթնցուցէ՛ք, կը խնդրեմ.
Արդ, երազած եմ ազգիս
նոր արշալոյսը կրկին:

## ՅԱԿՈԲ ՆԱԼՊԱՆՏ ՏԼՏԼԵԱՆ

### ՅՈՒԴԱՆ ՆԵՐԿԱՅ ՉԷՐ

Վերջին ընթրիքին Յուդան
ներկայ չէր
Յիսուս շատ երկար սպասեց
անոր
բայց Յուդան չեկաւ

Գեթսեմանի պարտէզի խորքը
ձիթենիներու լայն ճիւղերու տակ,
լրիւ զրահով բազում զինուորներ
լուռ սպասեցին մահուան
համբոյրը

Երբ արշալոյսին աքաղաղը
կանչեց
Պետրոս զղջաց,
որ երեք անգամ ան չէր ուրացած
իր Տիրոջ սիրած

Երկար եւ լարուած սպասումի
մէջ,
երկչոտ Կայափան իր սուղ,
մետաքսեայ
պատմուճանը լայն
չկրցաւ պատռել,

եւ Պիղատոսը ձեռքերը սոթթած
սպասեց երկար որ ձեռքը լուայ,
դատէ քմահաճ եւ աժանօրէն
անցնի պատմութեան
եւ դառնայ անմահ

եւ գող Փարապան
հռոմէական աղտոտ եւ խոնաւ
բանտախուցին մէջ
անշուք մահացաւ
անհետք եւ… հիւանդ
Երկու աւազակ
որոնք խաչուեցան այդ Ուրբաթ
կէսօր
անոնցմէ մէկն այդպէս ալ դրախտ
երբեք չտեսաւ
եւ տիրոջը հետ
ան ընթրիք չըրաւ
Այլ ընկերոջ հետ
Դժոխքի փարթամ
ցոփ միջավայրի աղմուկներու
մէջ
Ուրբաթ երեկոն ըմբոշխնեցին
եւ Տէր Աստծուն
խոր փառք յայտնեցին

Յովսէփի նոփ-նոր դամբարանն
ալ
ժամանակաւոր հիւր մը
չընդունեց,
որմէ յարութեան լոյս եւ
ճաճանչներ
պիտի դուրս շողար

Յովհաննէսն ալ Աստուածամօրը
իբրեւ իրեն մայր
բնաւ չճանչցաւ
եւ Մարիամն ալ իր Միածինի
կորուստի ցաւով
չհրկիզուեցաւ:

Թովմասը մնաց անշուք
առաքեալ
եւ չշօշափեց մեր Տիրոջ
խորունկ,
լոյս սպիները:

Հասարակ համբոյր
հոսքը պատմութեան
այն այդպէս փոխեց

Վերջին ընթրիքի երեկոյէն ետք
Մեր Տէր Յիսուսն ու առաքեալ
Յուդան
Ոչ ոք չտեսաւ:

## ԱՐԱՄ ՔԷԹԷՆՃԵԱՆ

Պաղտատ- Իրաք

### ՄԱՍԻՍՆ ԵՄ ԵՍ

Դեռ աշխարհներ կեանք չառած.
Դեռ երկինքը մթագնած.
Դեռ անդունդը խաւարած
Ու երկիրը անձեւուած.

Դեռ ջուրերը չզատուած.
Լիճ ու ծովեր չկազմուած.
Դեռ Ադամը չստեղծուած
Ես կանգնած եմ սիգապանծ...

Ես այնտեղն եմ, ուր Աստուած
Արքայութեանն է բազմած.
Նոյեան Տապանն է հանգչած
Եւ մարդկութիւնը սերած...

Սակայն, հայրն եմ ես հայուն.
Վառ հոգին եմ չշիջած.
Սիրտն ու կամքը չմեռած...
Ես Մասիսն եմ, լեռ կենաց:

էջը կազմեց
Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան
տպարանում
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ